Ազգ

Azg
armenian daily

6 ԱՊՐԻԼ 2000 ՀԻՆԳՇԱԲԹԻ 63 (2031)

Շվեդիայի Ռիկստագը չհետեւեց Ֆրանսիայի Սենատի օրինակին

ՍՏԱՄԲՈՒԼ, 5 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ինչպես եւ ակնկալվում էր, պաշտոնական Անկարան կտրուկ արձագանքեց Շվեդիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման փաստին: Թուրքական էն-տե-վե հեռուստաընկերության տեղեկացմամբ, ապրիլի 5-ի երեկոյան կազմակերպված մամլո ասուլիսի ժամանակ Թուրքիայի ԱԳ նախարարության խոսնակ Սերմեթ Աքաջանլին հայտարարել է, թե տարբեր երկրներում ժամանակ առ ժամանակ բարձրացվում է «այսպես կոչված» Հայոց ցեղասպանության հարցը: Ըստ թուրք դիվանագետի հավաստման, Թուրքիայի կառավարությունը պայմանավորվածություն ուներ Շվեդիայի կառավարության հետ նախաձեռնության հաստատումը կանխելու վերաբերյալ, սակայն շվեդական կառավարությունն ի վիճակի չի եղել ներազդել խորհրդարանի վրա:

«ՀԱՄԱՁԱՅՆ» ՇԱՐՔԻՑ

Ի՞նչ պատահեց, երբ Արմեն Խաչատրյանը թիկնապահին Ավստրալիա չտարավ...

Ըստ երեւույթին Ազգային ժողովի խոսնակի յուրահանչյուր արտասահմանյան ուղեւորություն կամ օդակայան երթուդարձ դատապարտված է գայթակղիչ պատմություններով ուղեկցվելու: Նկատի չունենք խալաթի եւ մյուս պատմությունները, որոնք պրն Արմեն Խաչատրյանը հերքել էր վերջերս: Այլ նկատի ունենք նրա թիկնազորին, որի լկտի պահվածքը մամուլի ուշադրության կենտրոնում է եղել բանից: Դժբախտաբար՝ միայն մամուլի: Այլապես չէր ավարտվի այսպիսի ողբերգությամբ: Երեքշաբթի օրը երեկոյան իր շեֆին «Զվարթնոց» օդանավակայան ուղեկցելուց հետո, Ա. Խաչատրյանի գլխավոր թիկնապահ, Ազգային անվտանգության նախարարության օպերլիազոր Արբակ Բաբասյանը գիշերը, ժամը 2:40-ի մոտակայքում Բաղրամյան-Կիեւյան փողոցների հատույթում վիճաբանության մեջ է մտել ինքնությունը չպարզված 30–35 տարեկան մի տղամարդու հետ եւ մեջքից հանելով հաշվեցուցակային «Մակարով» տիպի ատրճանակը, մի կրակոցով սպանել է տարաբախտ երիտասարդին:

Այսինքն դեպքը, ինչպես որակում են դատաքննչական լեզվով, կատարվել է կենցաղային հողի վրա: Սակայն, ըստ մեր ունեցած տվյալների, դրան նախորդել է կենցաղային մեկ այլ միջադեպ, որը հոգեբանական պրկված կացության մեջ է դրել օպերլիազորին: Բանն այն է, որ ամենուր զրահապատ մեքենայով եւ աջ ու ահյակ կրակող թիկնապահների ուղեկցությամբ շրջող Աժ նախագահը երեքշաբթի օրը պատշտոնական այցով Ավստրալիա մեկնել է առանց պրոտոկոլով իրեն հատանելի թիկնապահի, փոխարենն իրեն ուղեկցող պատվիրակության կազմում ընդգրկելով, ըստ մեզ հասած տվյալների, սեփական կնոջը՝ տիկին Լուսինեին: Սույն հանգամանքը խիստ վրդովվեցրել է թիկնապահներին, որոնց պետը՝ նույն վերոհիշյալ Արբակ Բաբասյանը, որն, ի դեպ, Արմեն Խաչատրյանի հետ կապված է նաեւ ազգակցական կապով եւ ԱԱՆ համակարգ է վերադարձել նրա Աժ խոսնակ ընտրվելուց հետո, այդ մասին բողոքել է Արմեն Խաչատրյանի հորը՝ «Հր. Աճառյան» համալսարանի ռեկտոր Խաչատրյանին: Այստեղից կարելի է պատկերացնել թիկնապահի զայրույթը շեֆի «վարքագծի» նկատմամբ, որ իր պահապան հրեշակին նախընտրել էր պահապան... մարդասպանից:

Բարեբախտաբար վերջինս այժմ ծերբակալված է: Դժբախտ երիտասարդի դիտավորյալ սպանության մեղադրանքով նրա գործի նախաքննությունն իրականացնում է Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների դատախազությունը:

Մինչեւ դատավարության սկսվելը խոնարհաբար խորհուրդ կտայինք Աժ խոսնակին, նույնիսկ Ավստրալիայից վերադառնալուց հետո եւ անգամ դրանից առաջ, անմիջապես ծերբազատվել իր թիկնապահներից: Հավանականություն չկա, որ որեւէ մեկը սպառնա խոսնակի կյանքին: Ազատ-համարձակ կարող է մաս գալ Երեւանի փողոցներում, ոտքո՞վ: Միակ իրական վտանգը նրա կյանքին, մեր կարծիքով, նրա թիկնապահներն են, որ կարող են, օրինակ, Ավստրալիայի մուտը հանել ոչ թե պատահական անցորդներից, այլ իրենց շեֆից: Պրն Խաչատրյանին խորհուրդ կտայինք վերադարձին իսկույն ազատվել նաեւ զրահապատ BMW ավտոմեքենայից: Այժմ հիվանդանոցում ապաքինվող ԼՂՀ նախագահն իսկապես կարիք ունի դրան, կրակողների երկիր Հայաստանում եւ Արցախում:

Հ. Ա.

Հ. Գ.–Հույս ունենք, որ մեր պատշտոնակից «Առավոտը», որ երկու օր առաջ խմբագրական էր նվիրել մեզ, այս անգամ «քարոզչական համազարկ» չի համարի մեր այս գրությունը:

ՄԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ

Ուզեր թե չուզեր, Վանոն պետք է փախուստի դիմեր

Հայ հասարակությունն այսօր չէ, որ գերագույն հեռանկարությամբ հետեւում է Վանո Սիրադեղյանի հետ կապված դատաքննչական զարգացումներին: Տրանսպորտում թե տանը, աշխատավայրում թե բակում, նարդու շուրջ հավաքված, մարդիկ անվերջ քննարկում են «Վանոյի հարցը»:

Դեռ երեկ հարցը մեկն էր. «Կտա՞, թե՞ չի տա Վանոյին Ազգային ժողովը»: Այսօր ամենուրեք հոլովվում է հարցի մյուս տեսակը. «Կբռնե՞ն, թե՞ չեն բռնի Վանոյին»:

«Վանոյի» հա՞րցն է արդյոք կատարված ոճրագործությունների մեխը: Այս ասպիճան պարզունակ մոտեցումը կատարվածի հանդեպ, կարծում եմ, մեր պարզունակ մամուլի «ձեռքի գործն» է, քանի որ միայն «Վանոյով» են հեղեղված թերթերը, ռադիոն ու հեռուստատեսությունը:

Իսկ մյուսնե՞րը: Արդյոք որոշակի ուժերի երկար ձեռքը չի՞ երեւում լրատվաբերուի մեջ: Վանոյին դարձնելով քաղաքական նոխազ, արդյոք չե՞ն ծգտում տվյալ ուժերը մնալ կատարվածի սվերում:

Ի՞նչ շահագրգռվածություն ուներ ՆԳՆ նախարար Վանո Սիրադեղյանը մահապատժի հրման արձակելու Աշտարակի շրջխորհրդի նախագահի, երկաթգծի վարչության պետի, մոսկովյան ձեռնարկատիրոջ կամ այլոց վերաբերյալ: Եվ անձամբ ծանո՞թ էր նա այն մարդկանց, որոնց կյանքի ու ապրելու հարցն էր դրել սպորտի աշխատողների առջեւ: Ունե՞ր արդյոք Սիրադեղյանը նրանց հետ բախված ընդհանուր շահեր:

Չեմ կարծում, քանի որ ոչ մի նմանատիպ հանգամանք ի հայտ չի եկել քրեական երկու գործերի քննության ընթացքում: Այսինքն, երեւի թե, պետք է հավատալ գործերով մեղադրյալներ Վահան Հարությունյանի ու Արմեն Տեր-Սահակյանի այն ցուցմունք-վարկածներին, որոնք որպես ոճրագործության մասնակիցներ մատնացույց են անում նախկին վարչակազմի մի քանի կարկառուն գործիչների:

Սակայն վարկածների հաստատման բանալին այսօրվա դրությամբ միայն Վանոյի ձեռքումն է, որը կալանվելուց հետո դժվար թե համառորեն քավության նոխազի դերը տաներ՝ դերը սրտովը չէր լինի, քանի որ կալանավորի կարգավիճակը երանելի չէ: Վաղ թե ուշ Վանոն «ախոթերությանը» կդավաճաներ, ինչի հետեւանքը, կարծում եմ, ծանր կլիներ իրենց հրեշակներ ձեւացնող ՀՀՇ-ի կարկառուն գործիչների համար:

Ով ինչ ասի, մենք էլ մերը պնդենք. Սիրադեղյանի միակ ելքը փախուստն էր՝ ոչ ՀՀՇ-ի գաղտնիքները կբացվեն, ոչ էլ «ազգի դավաճանի» համբավ ձեռք կբերի: Վանոն էլ գերադասեց տվյալ սողոմոնյան լուծումը:

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՃԵՊԱԶՐՈՒՅՑ

Երբ որոշումը կայացնում են, պիտի կատարվի

«Ո՞ւմ ընկերն է Վանոն» հարցին վարչապետ Արամ Սարգսյանի պատասխանները

ՆԱԲԻԼԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

«Վարչապետին բռնել, Վանոյի մասին թե հարցնում», երեկ նեղտրած հայտարարեց Արամ Սարգսյանը, բայց չխուսափեց պատասխանել բոլորին հուզող հարցերին՝ Վանո Սիրադեղյանն ո՞ւմ աջակցությամբ է հեռացել հանրապետությունից իր կալանավորման նախօրյակին, կամ «ո՞ւմ ընկերն է Վանոն». «Ճիշտն ասած, իրավական հարցեր են, չեմ գտնում, որ ես խոսելու իրավունք ունեմ: Դատարանը պիտի պարզի՝ Վանո Սիրադեղյանը մեղավո՞ր է, թե՞ ոչ: Եթե դատարանը որոշել է խափանման միջոցը՝ կալանավորել, ուրեմն դատախազը պետք է մտներ այդ միջնորդությամբ: Եղածին ես նայում եմ որպես ընթացակարգ: Իմ կարծիքով, ամեն ինչի հիմքում օրինականությունն է, օրենքը կա, պետք է կատարել, եթե խախտում կա այդ ընթացակարգում, ես պատրաստ եմ պատասխանել»:

«Ազգի» այն հարցին, թե Արամ Սարգսյանի կարծիքով, ներքին գործերի եւ ազգային անվտանգության նախարարությունների թերացումը չէ՞, որ առ այս պահը պարզ չէ, թե որտեղ է կալանքի ենթակա Վանո Սիրադեղյանը՝ հանրապետության ընդհանակո՞ւմ, թե՞ անվտանգ արտասահմանում, Արամ Սարգսյանն արձագանքեց հաստատակամ. «Միանշանակ կարծում եմ՝ այո, պետության հիմքը նրանում է, որ երբ որոշումը կայացնում են, պիտի կատարվի, չեն կատարել, թերացել են... Իմ ֆանտազիաներն ավելի շուտ արդյունաբերության մեջ են, քան հանցագործությունների եւ տարբեր կարգերի ենթադրություններում: Ցանկացած տարբերակ համարում եմ հնարավոր: Մեղադրանքները, որ հնչում էին Վանո Սիրադեղյանի հասցեին, դեռ չի նշանակում, որ ճիշտ են, արդացուցման կարիք կա: Եթե Վանո Սիրադեղյանը մնար, միգուցե կարողանար ապացուցել, որ ինքը կարդ չունի, եթե չի մնացել, կասկածի տեղիք է տալիս, որ կարդ ունի: Ընդհանրապես արդարադատության մասին, խոսքս միայն Հայաստանի մասին չէ, փայլուն կարծիքի չեմ:

Իմ աջակցությունը Վանո Սիրադեղյանին հանրապետությունից հեռանալու գործում, իհարկե, չի եղել: Ես ուղղակի չեմ հասկանում հետաքրքրության այն մեծ շրջանակը, որ վերաբերում է Վանոյին: Իմ կարծիքով, այս երկրի մեջ շատ ու շատ ավելի կարեւոր հարցեր կան լուծելու, քան դատերն ու դատավարությունները, որ ուղղակի խանգարում են այս երկրի տնտեսության մեջ ներդրումներին: Իսկ միջնորդության կամ չմիջնորդության որեւէ խնդրանք ինձ Վանո Սիրադեղյանի կողմից չի եղել: Միջնորդություն, թե Հայաստանից գնում եմ՝ օգնիր, նման բան չի եղել: Կարող եմ ընդունել՝ որոշակի շրջանում Վանո Սիրադեղյանը եղել է իմ եղբոր ընկերը, եւ ես տրամադրված եմ եղել նրա հանդեպ որպես որոշակի շրջանի եղբորս ընկերոջ: Եթե ինքն ինձ որոշակի հարցերով դիմեր, օգնության, իհարկե, ոչ փախուստի, ես կօգնեի», եզրափակեց վարչապետը:

Քաց նամակ հայ ժողովրդին

Ինստիտուտի ընձեռած հնարավորություններից օգտվելով. խմբագրությունը ձեռք է բերել բարոնուհի Քերոլայն Քոխի հետեւյալ բաց նամակը՝ ուղղված հայ ժողովրդին: Հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար ստուգվել եւ անձամբ հեղինակի խոսքերով հաստատվել է, որ իրոք նամակը գրված է իր կողմից:

«Ազգի» արխիվից.
Քերոլայն Քոխը Չլդրանի հոսպիտալում:

ՔԵՐՈԼԱՅՆ ՔՈՔԻՆ
Լորդերի պալատ
Վեստմինստեր
Լոնդոն, Անգլիա

Գրում եմ այս նամակը՝ որպես մի անձնավորություն, որը մեծ սեր եւ հիացմունք է տածում հայ ժողովրդի հանդեպ: Այդ սերն էլ ինձ ստիպում է ահազանգել:

Անկախության վերահիշանալուց մեկ տասնամյակ անց Հայաստանը կարող է հայտնվել այնպիսի մեծ վտանգի առաջ, որ իր անկախությունն ու անգամ գոյությունը խաթարվի: Ադրբեջանի հետ Հայաստանի կառավարության ներկայիս վարած բանակցությունների առաջացրած հույսը խաբուսիկ է: Կովկասում իսլամիստ խմբավորումները վճռականորեն որոշել են ուժի միջոցով «լուծել» Հայաստանի եւ Ղարաբաղի «հարցերը»: Ոչ մեկը, առավել եւս ոչ Ադրբեջանը եւ ոչ Թուրքիան, չեն կանգնելու նրանց ճանապարհին: Հաշվի առնելով վտանգի ահագնությունը եւ միջազգային քաղաքական ու տնտեսական շահերի բարդությունները, հրամայական պահանջ է դառնում, որ հայկական սփյուռքը շատ համախմբվի եւ օգնության ձեռք մեկնի հայրենիքին, քանի ուշ չէ: Շատ ավելի կարեւոր եւ մեծագույն մարտահրավեր է գործել այժմ, անմիջապես՝ կանխելու համար մեկ ուրիշ ցեղասպանություն, քան հետագայում սգալ դրա հետեւանքները: Գրում եմ, ուրեմն, այս նամակը տխուր ուրով եւ խոր համեստության ոգով:

Տես էջ 4

Ազնավուրը չի այցելի Վրաստան

ԹԲԻԼԻՍԻ, 5 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ: Հանրահայտ ֆրանսիացի երգիչ Շառլ Ազնավուրի հետ Վրաստանի նախագահ էդուարդ Շեւարդնաձեի Ջավախքում նախատեսվող հանդիպումը չի կայանա: Շառլ Ազնավուրը պետք է հաստակ Ֆրանսիայից ժամաներ Վրաստան, որպեսզի աջակցեր էդուարդ Շեւարդնաձեին՝ առաջիկա նախագահական ընտրությունների առնչությամբ եւ այցելեր իր ծնողների տունը, որը գտնվում է Ջավախքում: Ինչպես հայտարարել է Վրաստանի նախագահի լիազոր Գիգլա Բարամիձեն, նախագահը նամակ է ստացել Շառլ Ազնավուրից, որում հանրահայտ երգիչը ներողություն է խնդրում, որ առայժմ չի կարող այցելել Վրաստան: Շառլ Ազնավուրը նամակում նշում է նաեւ, որ էդուարդ Շեւարդնաձեին համարում է ականավոր քաղաքական գործիչ եւ Վրաստանի հայ բնակչությանը կոչ է անում նրա թեկնածությունը պաշտպանել առաջիկա նախագահական ընտրություններում: Բարամիձեի խոսքերով, Շառլ Ազնավուրը մոտ ժամանակներս անպայմանորեն կայցելի Թբիլիսի: Ծրագրված է նախագահական ընտրություններն անցկացնել ապրիլի 9-ին: Ընտրություններին կմասնակցեն բարձրագույն պետական պաշտոնի 7 թեկնածուներ:

Դեմիրելը չի վերընտրվի

ՍՏԱՄԲՈՒԼ, 5 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 5-ին Թուրքիայի խորհրդարանում վերջին անգամ քվեարկվել է նախագահ Սուլեյման Դեմիրելի երկրորդ ժամկետով վերընտրվելու վերաբերյալ սահմանադրական լրամշակման նախագիծը ու դարձյալ մերժվել: «Ազատության» հաղորդման համաձայն, առաջարկի օգտին քվեարկել է 303 պատգամավոր, դեմ՝ 177, այնինչ առաջարկն ընդունելու համար անհրաժեշտ է 550 տեղանոց խորհրդարանի քվեների առնվազն 2/3-ը, այսինքն՝ 367 ձայն:

ընթացիկ

Երբեմնի հենարանը կորցրած Միրադեղյանը հանկարծ հասկացավ արդարության արժե՞քը

Դատաքննչական Վանյա Սուքիասյանը չափազանց դժգոհ է դատավարության ընթացքից՝ համարելով, որ վերջինն ուղեկցվում է մի շարք խախտումներով: «Ես չէի ցանկանա տեսական դատողություններ անել՝ կվերադառնա՞ դատավարությունն օրինական ընթացքի, թե՞ ոչ, սակայն կատարվածի պես մի բան կանխատեսում էինք», շարունակեց դատաքննչականը՝ ընդգծելով, որ Միրադեղյանը, իր՝ Սուքիասյանի համար մարդկայնորեն հասկանալի պատճառներով կարող էր նաև խույս տալ դատախանատվությունից: Վանյա Սուքիասյանի դատարանին ուղղված միջնորդությունը, որ կոչ էր անում դադարեցնել հարգելի՞ է Միրադեղյանի բացակայության պատճառը, թե՞ անհարգելի, անդատախան էր մնացել: Ըստ Սուքիասյանի, բացակայության պատճառը հարգելի է, քանի որ մեղադրյալը վատառողջ էր:

Այնուհետեւ Վանյա Սուքիասյանը շարունակեց իր արծանագրած խախտումների թվարկումը: Նա վկայակոչեց Սահմանադրությունն, ուր գրված է, որ անձի ազատության սահմանափակման իրավունքը պատկանում է միայն դատարանին: «Անձի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը պատկանում է այդ գործի վարույթն իրականացնող կառույցին», ասաց նա եւ հաստատեց, որ, այո՛, պատգամավորի անձեռնմխելիությունը խափանելու որոշում կարող է ընդունել միայն ԱԺ-ն՝ գլխավոր դատախազի միջնորդությամբ, ինչպես եւ կատարվեց Միրադեղյանի դեպքում: Սակայն, վկայակոչելով նույն Սահմանադրությունը, դատաքննչականն ասաց նաեւ, որ եթե պատգամավորի կալանավորման հարցով գործի՝ մինչեւ դատական վարույթ անցնելը հանդես է գալիս դատախազությունը, ապա արդեն դատական վարույթում գտնվելու ընթացքում բացառվում է, որ ԱԺ պատգամավորի խափանման միջոցը ընտրվի կալանքը: Այս առումով նա հիշեցրեց, որ օրենքում բաց կա: «Սակայն ի՞նչ ունենք, այն էլ ունենք», ասաց նա, «ԱԺ-ն չէր կարող կալանելու թույլտվություն տալ, եթե դատաքննություն է ընթանում»:

Ամբաստանյալի նկատմամբ կատարածները դատարանը գնահատեց՝ ելնելով դրանց հանրավտանգավորությունից: Սակայն Սուքիասյանը նշեց, որ դատարանը չի հետաքրքրվել, թե ինչպիսի անձնական հանգամանքներ են հանգեցրել նրան, որ նա ենթարկվի հանցագործության: Դատաքննչականը նաեւ

հրատարակ

«Արդեն մենք էլ ենք կասկածում՝ դուրս գա՞նք, թե՞ մնանք»

Արամ Սարգսյանը խնդրեց խորհրդարանին չկասկածել

«Կառավարությունն ինքն է որոշում՝ ում հետ գնալ եւ ինչպես... ԱԺ-ն ուզում է եւ օրենսդիր, եւ գործադիր ակտեր իրականացնել», իր հենարանը համարվող խորհրդարանին ակնհայտ դժգոհությամբ հայտարարեց վարչապետը, որին «Միասնություն» խմբակցության որոշ պատգամավորներ եւ «Կայունություն» խմբի ղեկավար Վարդան Այվազյանը փորձեցին հրապարակային դժգոհություն հայտնել, թե ինչո՞ւ իրենք դուրս են մնացել Արամ Սարգսյանի շախմբից, երբ վերջինս ափսոսանքային այց էր կազմակերպել Չարենցավան՝ ուսումնասիրելու հայաստանյան արդյունաբերության երբեմնի կենտրոն հանդիսացող այս քաղաքի ներկա իրավիճակը: Արամ Սարգսյանն անկեղծ էր, այն պատգամավորները, ովքեր իրոք անկեղծ մղում ունեին օգտակար լինելու, եկել էին առանց հրավերի, բայց գայթակղությունը՝ պաշտոնապես լինելու իշխանական շախմբում «Կայունության» եւ «Միասնության» շաս անդամների է համակել, ուստի սեփական փառասիրությունը բավարարելու համար Վարդան Այվազյանը եւ Վանյա Հովհաննիսյանը սեւ գույներով մտահոգություններ հնչեցրին Չարենցավանի վերաբերյալ՝ անընդմեջ առաջարկելով իրենց աջակցությունը, ընդ որում Չարենցավանից համամասնական եւ մեծամասնական ընտրված այս երկու պատգամավորների մտահոգությունն արտահայտվում էր անգամ հարազատ քաղաքի բնակչության ճշգրիտ թվի սխալ իմացությամբ: Արամ Սարգսյանը ճշգրտեց, որ Չարենցավանում այսօր ապրում է 21 հազար մարդ, եւ ինքը պատրաստ է իր ուժերի շրջանակում ոտքի կանգնեցնել նախկին արտադրական հզորությունները:

Խորհրդարանական չորեքշաբթին դժվարընթաց էր եւ անարդյունավետ, առավոտյան առաջին ընթերցմամբ վավերացվեցին երեքշաբթվանից ժառանգություն մնացած օրինագծերը, իսկ մինչեւ կառավարության հետ հանդիպումը խորհրդարանն այդպես էլ ավարտին չհասցրեց ոչ մի նախագծի քննարկում. միջանցքում անհանգիստ քննարկումներ էին սեփական սասանվող վարկի եւ Վանո Սիրադեղյանի գտնվելու հնարավոր վայրի շուրջ: Բոլոր պատգամավորների շուրթերին Ավստրալիա մեկնած ԱԺ խոսնակ Արմեն Խաչատրյանի անվտանգության ծառայության ղեկավարի հերթական «անկանխատեսելի» քայլն էր, որն այս անգամ ավարտվել էր ողբերգությամբ՝ Արբակ Բաբասյանը, որն ԱԺ խոսնակի ազգականն է, հրազենային կրակոցով սպանել է իր հետ վիճաբանության մեջ մտած մի քաղաքացու. պատգամավորներից ոմանք լուրջ դեմքով արձանագրում էին, թե հոկտեմբերի 27-ից հետո ԱԺ-ն դուրս չի գալիս ծախորդությունների շրջանակից: Խորհրդարանականներն ուզում էին լուրեր քաղել նաեւ իրենց գործընկերոջ՝ Վանո Սիրադեղյանի մասին, բայց միայն ոչ հրապարակով: Օրենսդիրներին այցելած ազգային անվտանգության նախարար Կառլոս Պետրոսյանին եւ ՆԳ նախարար Հայկ Հարությունյանին փոխարինող փոխնախարար Հովակիմյանին ոչ ոք ոչ մի հարց չուղղեց, գերադասեցին միջանցքում փսփսուքով փոխանակել ցանկալի տեղեկատվությունը:

Որ գողանում են, բոլորս գիտենք

Խորհրդարանին համակել է կասկածը, եւ այդ կասկածը զարմացրեց անգամ զուսպ վարչապետին, որը խնդրեց չկասկածել եւ անկեղծ խոստովանեց. «Մտածում եք ամուսնացել եմ, երեխա կունենա՞մ, թե՞ չեմ ունենա, եթե կասկածեք՝ չեք ունենա, այնպես եք կասկածում, որ մենք էլ ենք մտածում՝ դուրս գա՞նք, թե՞ մնանք»: Այս երկմտանքը թերեւս համակել է Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր քաղաքացիներին, եւ կարծես ի պատասխան «դուրս գալու, թե մնալու» տատանումի, ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Լեւոն Բարխուդարյանը հրապարակեց առաջին եռամսյակի հայաստանյան տնտեսության արդյունքները. «99 թ. առաջին եռամսյակի համեմատությամբ՝ 2000 թ. հունվար-մարտ ամիսներին Հայաստանում գրանցվել է ՀՆԱ 1,4 տոկոս աճ, արտահանումն աճել է 21 տոկոսով, ներմուծումը՝ 1,5 տոկոսով, սղաճը 1,4 տոկոսի սահմաններում է: Եթե անցած տարվա առաջին եռամսյակում կառավարությանը հաջողվել է հավաքել 34 մլրդ դրամ եկամուտ, ապա այս տարի հավաքվել է 30 մլրդ: Հիմնական թերակատարումը, Լեւոն Բարխուդարյանի համոզմամբ, ոչ հարկային եկամուտների գծով է, հարկային եկամուտները նշված երեք ամսում կազմել են 27 մլրդ դրամ, որից մարտ ամսին՝ 10,3 մլրդ դրամի հարկեր եւ տուրքեր: Մոտ 1 մլրդ դրամ պակաս գումար է հավաքվել, քան նախատեսված էր, հիմնական թերակատարված հարկատեսակներն են՝ ԱԱՀ-ն, շահութահարկը եւ մաքսատուրքերը: Լեւոն Բարխուդարյանը լիահույս է՝ բյուջեի կրճատում՝ սեկվեստոր չի լինի, եւ կանխելու համար սեկվեստորի վտանգը կառավարությունը գտել է ամենադյուրին եղանակը՝ ԱԺ համաձայնությամբ սեփականաշնորհման միջոցներից 26-27 մլն դոլար ուղղել ընթացիկ ծախսերին: Արտաքին պետական պարտքի հետաձգման որոշակի հույսեր կան նաեւ՝ ի մասնավորի Ռուսաստանի պարագայում, որին մենք պետք է վերադարձնենք 18 մլն դոլար, բայց ակնկալում ենք, որ մեր ռազմավարական գործընկերը կհամաձայնի այս տարվա պարտքի որոշ մասը ստանալ ադրանքային ծածկույթով: Ուշացումով ընդունված բյուջեի կատարումը ծանր է ընթանում, բայց ռեզերվներ երեւում են, հավաստիացրեց միշտ լավատես Լեւոն Բարխուդարյանը:

Էներգետիկայի նախարար Դավիթ Զադոյանը լավատես չէր: Նրա եւ պատգամավոր Վահան Հովհաննիսյանի միջեւ սկիզբ առած բանավեճը հետաքրքիր տեղեկություններ բացահայտեց. Հայաստանն այսօր միակ պետությունն է, որ Ռուսաստանից գնում է միջուկային վառելիք կանխիկ տարադրամով, կամ, ինչպես ծեւակերպեց Վահան Հովհաննիսյանը՝ քաշ փողով: Կուտակվել են պարտքեր, որոնք Ռուսաստանը համաձայն է փակել էլեկտրաէներգիայով, բայց մեր կառավարությունը համաձայն չէ: Դավիթ Զադոյանն անկեղծ էր. ռուսական կողմը հանձին «Մաշ» գործարանի տնօրեն Մեժուեւի, «Արեդմաշի» ղեկավար Դիամինովի, փորձում են ազդել հայաստանյան որոշ ուժերի վրա, որպեսզի կանխեն ադրանքային ծածկույթով կամ Հայաստանի համար առավել ձեռնտու պայմաններով պարտքի փակումը: Զադոյանը փաստեց, որ ռուսական կողմը մեզանից ուզում է գնել էլեկտրաէներգիա՝ ՀԱԷԿ-ի գնով՝ 1 կվտ-ն 1,8 ցենտ, այն դեպքում, երբ մենք հոսանքը վաճառում ենք 2,5 ցենտով. բացի այդ՝ հոսանք ուզում է ստանալ Վրաստանի գծով, որն արդեն զբաղված է եւ հրաժարվում է նպաստել Թուրքիայի գծի բացմանը, հանուն որի կարելի էր մասամբ զիջել էլեկտրաէներգիայի գինը: Պատգամավոր Տարոն Սահակյանի միջոցով, որը Ռուսաստանում լուրջ գումարներ ունի, սակայն ի զորու չէ դրանք վերադարձնելու, որոշում է ընդունվել յուրօրինակ հաշվանցում կատարել: Տարոն Սահակյանի ընկերության գումարները հաշվանցվում են մեր պարտքի դիմաց, իսկ այստեղ ստանալիք 11 մլն դոլարի ռուսաստանյան վարկը, որ պետք է ուղղվեր միջուկային վառելիքի գնման վճարումներին, տեղում կհատկացվի Տարոն Սահակյանի ընկերությանը: Հաշվանցման արդյունքում Տարոն Սահակյանը կկորցնի մի քանի միլիոն դոլար, բայց պետության հետ մեկտեղ կհայտնվի շահեկան վիճակում, Ռուսաստանն իր գումարը երբեւէ թույլ չէր տա դուրս բերել: Վահան Հովհաննիսյանը հրապարակավ խոստովանեց, որ այս գործում իր համար ի սկզբանե ամեն ինչ պարզ չէր: Ինքը միայն ցանկանում է պարզել, թե ով է թալանում երկիրը: Դավիթ Զադոյանը համամիտ էր. «Որ գողանում են, բոլորս գիտենք, միասին պայքարենք, իսկ թալանը ինձ հաջողվել է թույլ չտալ»: Այսպիսով, 11 մլն դոլարով կհաջողվի փակել 16 մլն դոլարի պարտքը: Համաձեռ պայքարի մթնոլորտն ԱԺ-ում եւ կառավարությունում շաղախված էր փոխադարձ կասկածանքներով:

ՆԱԲԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Գրանդ ֆենդին» ապրիլի 10-ից կհամտեսենք

Տեղական արտադրությունը զարգացնելու ու սպառողին հասցնելու կապակցությամբ երեք ամիս հայ-ռուսական «Գրանդ ֆենդի» ՍՊԸ-ն կապիտալ վերանորոգումից հետո ապրիլի 10-ից իր արտադրանքի 60 տեսականի (30 կարամել, 30 շոկոլադ) կներկայացնի սպառման շուկա: Ներկայացվող բազմազան տեսականու շարքում հատուկ ուշադրություն է դարձված մանկական կարամելներին՝ կաթնային, ընկույզով, ջեմերով եւ 3 տեսակ կաթնային շոկոլադներին: «Գրանդ ֆենդին» իր հիմնական հումքը բերում է դրսից (կակաոն՝ Մալայզիայից, կակաոյի յուղը՝ Գանայից, շաքարավազը՝ Ռուսաստանից), իսկ կոնֆետի միջուկը եւ պովիդլոները այսուհետ կմատակարարի Աշտարակի պահածոների ԲԲԸ-ն, որի տնօրեն Արմեն Մարտիրոսյանի ու հայ-ռուսական «Գրանդ ֆենդի» ՍՊԸ գործադիր տնօրեն տկն Արմինե Հովհաննիսյանի միջեւ երեկ կնքվեց պայմանագիր: Գործարանն ամսական կմատակարարի 11 հազար 500 կգ բալի, ծիրանի, ընկույզի եւ այլ պովիդլոներ, որոնք կօգտագործվեն կոնֆետների միջուկների մեջ: Ներկայումս արտադրամասում աշխատում են 270 հրուշակագործներ, որոնց աշխատավարձն ամսական կազմում է 53 հազար դրամից բարձր: Կապիտալ վերանորոգումից հետո արտասահմանից գնվել են փաթեթավորման սարքերը, հոսքային գծերը, որոնք հնարավորություն կտան նորովի մատուցել տեսականին: Բացի կարամելից ու շոկոլադներից, կարտադրվի նաեւ տուփերով շոկոլադներ, քաղցրավենիք, նաեւ մանկական խաղալիքներ կոնֆետներով: Իսկ Սուրբ Շատկի հետ կապված կթողարկվի նաեւ մանկական խաղալիք «ձու-կոնֆետը»: Տկն Հովհաննիսյանը մտահոգված էր, որ տեղական արտադրողը պաշտպանված չէ, եւ հարկերն էլ վերանայվելու կարիք ունեն՝ տեղական արտադրողի համար: Դժվարություններ շատ կան, սակայն թողարկվող հրուշակեղենը 500-600 դրամով էժան կլինի ներկրվող նույնատիպ արտադրանքից: Մի նորույթ նույնպես՝ շուտով Մաշտոցի պողոտայի վրա (նախկին «պոնչիկանոց») կբացվի ֆիրմային խանութ եւ, իհարկե, կվաճառվի բոլորին շատ սիրելի պոնչիկն (փիթբլիթ) ու կակաոն:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԱՐՅԱՆ

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության ճիգերից մեկը՝ կասեցնելու արտագաղթը Հայաստանից

երեկ Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցավ ԱՄՆ կողմից ֆինանսավորվող համակարգչային ուսուցման փորձնական ծրագրի շնորհանդեսն ու համակարգչային կենտրոնի բացումը: Այստեղ հունիս ամսից հայաստանցի մոտ 50 ծրագրավորողներ ու հարակից մասնագիտությունների տեր մարդիկ կվերապատրաստվեն առաջավոր համակարգչային ծրագրավորման եւ ինտերնետային էջերի ձեւավորման բնագավառներում: Ծրագիրն արժե 100 հազար դոլար, որն ամբողջությամբ տրամադրել է ԱՄՆ կառավարության կողմից ֆինանսավորվող գիտության ու տեխնոլոգիայի միջազգային կենտրոնը: Գումարի մի մասով ձեռք են բերվել համակարգիչներ ու տեղադրվել ամերիկյան համալսարանում տեղ գտած հատուկ համակարգչային կենտրոնում ու կօգտագործվեն ուսուցողական նպատակներով:

Համակարգչային կաբինետի կարմիր ժապավենը կտրեց ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Մայքլ Լեմոնը, որն էլ պարզաբանեց ամերիկյան կողմի շահագրգռությունը համակարգչային ծրագրավորողների վերապատրաստման ծրագրի նկատմամբ: «Մեզ համար կարեւոր է, թե ինչպե՞ս պետք է օգտագործենք Հայաստանի մտավոր ներուժը», ասաց դեսպանը: Ըստ նրա, ծրագրի հիմնական նպատակներից մեկը ոչ միայն բնագավառում առկա գործազրկությունը նվազեցնելն է, այլեւ Հայաստանից գիտնականների արտահոսքի կասեցումը: Երրորդ կարեւոր նպատակը, ըստ պրն Լեմոնի, «Հայաստանի ամենախոստումնալից բնագավառներից մեկի՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ու ծրագրավորման զարգացումն է»: Ամերիկացիները շատ բարձր են գնահատում այդ բնագավառում Հայաստանի ներուժն ու մասնագետների պատրաստվածությունը: Մինչեւ այժմ այստեղ շատ կրթական ծրագրեր են ֆինանսավորվել ԱՄՆ կողմից, որոնց, սակայն, մեծ մասամբ մասնակցել են երիտասարդները: Այս մի ծրագիրը տարբերվում է մյուսներից. նրանում կընդգրկվեն դեսպանի խոսքերով, իր նման «մորուքավորները», այսինքն՝ տարեց մարդիկ: Ծրագրում ընդգրկված են հիմնականում 35 տարեկանից բարձր մարդիկ, որոնք ունեն մեծ փորձ ծրագրավորման ու հատկապես ռազմարդյունաբերության բնագավառում:



Ուղեղների արտահոսքը փոխարինվում է ուղեղների օգտագործմա՞մբ

Ներկայումս Հայաստանում կան 4-5 հազար գործազուրկ ծրագրավորողներ ու հարակից մասնագիտությունների տեր մարդիկ: Նույնքան էլ մասնագետներ վերջին տարիներին լքել են երկիրն ու մեկնել արտասահման, հիմնականում՝ ԱՄՆ: Նրանցից շատերն արդեն ունեն իրենց սեփական գործն ու պատկառելի գումարներ են աշխատում. հայտնի է, որ ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառը համարվում է աշխարհում ամենաեկամտաբեր ճյուղերից մեկը: Այս բնագավառում ԱՄՆ-ը առաջատար երկիր է եւ Հայաստանի նման երկրների համար ունի իր յուրահատուկ քաղաքականությունը, ամերիկյան գլխամասային ընկերությունները իրենց դուստր-ընկերություններն են բացում նման երկրներում ու որպես էժան աշխատուժ օգտագործում տեղի մասնագիտական ներուժը: Նման փորձ կա Արեւելյան Ասիայի երկրներում, մասնավորապես Հնդկաստանում: Այսօր արդեն Հայաստանում էլ կան ամերիկյան նմանատիպ ընկերություններ: Դրանցից ամենախոշորի՝ HPL-ի տնօրեն Անդրանիկ Հովհաննիսյանը «Ազգին» տեղեկացրեց, որ իրենց մոտ ներկայումս աշխատում են 75 ծրագրավորողներ ու մաթեմատիկոսներ, սակայն ընկերությունը դեռ կարիք ունի բարձրորակ մասնագետների, հետեւաբար իրենք շատ են կարեւորում վերոհիշյալ ծրագիրն ու նրա շարունակությունը: Պրն Հովհաննիսյանը նշեց, որ ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառը Հայաստանում թերեւս ամենահեռանկարայիններից է, քանի որ ճյուղի զարգացման համար չկան տրանսպորտային ու հումքի հետ կապված խնդիրներ: Դա շատ լավ են հասկացել ամերիկյան ընկերությունները, եւ եթե մի քանի տարի առաջ դրանց թիվը 3-4 էր, ապա այսօր՝ 12-ը: Ամերիկյանից բացի կան նաեւ մոտ 25 զուտ հայկական ընկերություններ, որոնք մասնագիտացել են ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում ու նույնպես կարիք ունեն բարձրորակ մասնագետների: Մի խոսքով, հավաստիացվեց, որ աշխատանքի տուկայում վերապատրաստված ծրագրավորողները խնդիրներ չեն ունենա: **«Ազգի»** այն հարցին, թե ովքե՞ր են վերոհիշյալ ընկերությունների պատվիրատուները եւ ինչքա՞ն աշխատավարձ են ստանում վարձված ծրագրավորողները, տվեց անորոշ պատասխան՝ պատվիրատուները գլխամասային ընկերություններն են, աշխատավարձն էլ «շատ պատշաճ է», որով մարդիկ կարողանում են պահել իրենց ու իրենց ընտանիքներին, դրան զուգահեռ էլ զբաղվել գիտությամբ:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՔՈՅԱՆ

ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի դեմ մահափորձն սոսկալի ավելի շուտ բացահայտվեց: Հետաքննության մասին ԼՂՀ գլխավոր դատախազի ասուլիսում տված տեղեկությունները հաստատում են, որ ահաբեկչությունն իրականացնելու մեղադրանքով կալանավորված անձինք իրենց առաջին խոստովանություններով միակամ իբրեւ ահաբեկչության կազմակերպչի ու հրահանգողի մատնացույց են անում ԼՂՀ պաշտպանության նախկին նախարար Սամվել Բաբայանին, որը նույնպես, ըստ գլխավոր դատախազի, խոստովանել է արդեն: Ս. Բաբայանն այն անունն է, որ առկայծել է մահափորձի լուրը լսող յուրաքանչյուրի մտքում, ով հետեւել է վերջին մեկ տարում Արցախում ընթացող ներքաղաքական պայքարին: Արցախի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների վերնախավի կողմից Սամվել Բաբայանին նետված ծեռնոցը շատ կտրուկ ու կոշտ պայքարի տարր էր պարունակում: Երկկողմանի անհանդուրժողականությունը վաղուց հասել էր էթիկայի ու պաշտաճության սահմանագծեր տեսարաններ սարքելով ժողովրդի համար: ԼՂՀ վարչապետը հայտարարում է, թե թույլ չեն տա, որ սեւ փողերն օգտագործվեն իշխանության դեմ, Սամվել Բաբայանն պատկանում է վարչապետին եւ այդպես շարունակ:

Թեպետ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը բոլորին հավաստիացնում էր, թե Արցախում ներքաղաքական վիճակը կայուն է, սակայն ինքն էլ վստահ գիտեր, որ դա ավելի շուտ Արցախում կայունություն տեսնելու ներշնչանք էր, քան իրական կայունություն: Վերջին անգամ, երբ նա մեկ անգամ եւս արտասանեց այս խոսքերը՝ մի քանի տողե անց դարձավ իր իսկ ներշնչած կայունության զոհը: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ ամիսներ առաջ ԼՂՀ նախագահը հայտարարեց, թե բարեփոխումների գործընթաց է սկսում Արցախում: «Պրոբլեմը նրանում էր, որ բոլոր մեր կառույցները բանակի ղեկավարի ճնշման տակ էին եւ դժբախտաբար ստացվում էր այնպես, որ բանակի հրամանատարը ղեկավարում էր կառավարությունը, եւ սա քայքայում էր պետությունը», հայտնեց նախագահը: Նրանից առաջ այսպիսի հայտարարություն էր արել պաշտպանության նախարար Սամվել Բաբայանը՝ 98 թ. դեկտեմբերի 21-ին ԵՊՀ-ում ունեցած հանդիպման ժամանակ. «Իշխանության խնդիր չունեմ, առանց իմ մասնակցության Արցախում ոչ մի հարց չի լուծվում»: Այս ինքնավստահ խոստովանությունը, պետությունն իր անձով պատկերացնելու մտածելակերպը բախտորոշ դարձավ ոչ միայն իր՝ Սամվել Բաբայանի համար, այլեւ՝ Արցախի:

Լավատեղյակները միանշանակ ինչպես շեշտադրում է նախագահը՝ Ս. Բաբայանի ազդեցության ներքո էին եւ բանակը, եւ տնտեսությունը, եւ իշխանությունը: Միանգամից կտրել նրան այս երեք լծակներից՝ չափազանցված կլիներ եւ, բնականաբար, անհանդուրժողական մթնոլորտ պետք է ստեղծվեր: Տարիներ արդեն տիրապետելու սովոր անձը հոգեբանորեն չէր կարող համակերպվել խաղից կտրուկ դուրս հայտնվելու վիճակին: Սի՞թե դա մի օրում լուծվելիք խնդիր էր: Պարբերաբար Արցախ այցելող մեր գործընկերները վկայում էին, որ նորաստեղծ պետության բնակիչների մեջ վախի տրամադրությունն է գերիշխողը՝ սարսափով են արտասանում Ս. Բաբայանի անունը՝ հանկարծ ոչ ոք չլսի: Նրանց չհավատալու իրավունք չունենք: ԼՂՀ նախագահը նույնպես պնդում էր, որ «հասարակությունն ուզում է ազատվել «պատերազմի սինդրոմից»: Խոստովանենք սակայն, որ «ազատվելու» մեթոդները ճիշտ չէին ընտրված՝ հինգ տարի շարունակ արցախյան պատերազմը ղեկավարած, հերոսացած անձին անթույլատրելի է մեկընդմիշտ հայտարարելը՝ «դու մեզ այլեւս պետք չես»: Բնականաբար, Ս. Բաբայանը չէր գնալու տանը նստեր, նա պետք է մտածեր համարժեք գործողությունների՝ վրեժխնդրության մասին, որի պատասխանը շատ ավելի կտրուկ էր, հատել էր անձնական վրեժխնդրության սահմանագիծը: Դա Արցախի համար ճակատագրական կրակոց էր:

Պատերազմի սինդրոմը

Հատկապես վերջին հինգ տարում մենք ականատես եղանք այս սինդրոմի տարաբնույթ դրսեւորումների, որոնք հաղթանակած երկրի պատերազմի հերոսներին ժողովրդի աչքում հերոսազրկելու, վնասազրկելու փոխարեն՝ հակակրանք, երբեմն նաեւ ատելություն սերմանեց նրանց նկատմամբ: Այսօր ժողովուրդը ցավով նկատում է, որ նրանք ապրում են դղյակներում եւ երբեմն արտասահմանյան թանկարժեք մեքենաներով: Իհարկե, պատերազմի իսկական վետերաններն արժանի են լավ ապրելակերպի ու մեծարման, որը նրանց պետք է պարգեւեր պետությունը, եւ որը պահանջելու իրավունք ունեին նրանք: Սակայն մենք տեսանք, որ փաստացի «կռվող տղաների» ֆենոմենն ուռճացվեց, եւ մարտադաշտից վերադառնալուց հետո նրանք չբավարարվեցին նույնիսկ քաղաքականության ասպարեզում ազդեցություն ունենալուց, տիրապետող դարձան նաեւ տնտեսության ոլորտում: Ընդգծենք, այն իշխանավորների թողտվությամբ ու օժանդակությամբ, որոնք նրանց զենքի կարիքն ունեին իրենց իշխանությունն ամրապնդելու համար: Սակայն սա պատերազմի սինդրոմի մի դրսեւորումն է: Մենք ականատես եղանք նաեւ մյուս տարբերակին. նրանք, ովքեր իրենց արժանի են համարում լծակներին տիրապետելու ու արժանավայել ապրելու համար եւ իրենք իրենց վերնախավ հռչակեցին, նույն մոտեցումը չցուցաբերեցին մարտական ընկերների նկատմամբ: Մամուլը բազմիցս գրել է, որ զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներն ամիսներ շարունակ զրկված են անգամ պետական չնչին նպաստից: Ինքս եմ ականատես եղել՝ ոտքից հաշմված ազատամարտիկը երբեմնի մարտական ընկերոջից, որն այժմ պետական պաշտոնյա է՝ դրամ էր խնդրում իր դպրոցահասակ երեխաներին գրենական պիտույքներ գնելու համար: Մեկ այլ դեպքում՝ «Արաբո» ջոկատի հրամանատարն ու մի տասնյակից ավելին անդամները երեք տարի անտեսվեցին ու ճնշման ենթարկվեցին իրենց երբեմնի մարտական ընկերների կողմից, որոնք այդ ժամանակ հանրապետության վերնախավն էին կազմում:

Պատմությունից մեզ հայտնի է՝ ամեն պատերազմ իր հերոսն է ծնում, մի անհատականություն, հավաքական մի կերպար, որի օրինակով սերունդներ են դաստիարակվում: Իմ կարծիքով, արցախյան պատերազմը չնայած հաղթանակած լինելուն՝ չունեցավ իր հավաքական հերոսի կերպարը, այն անհատը, որի անունը կդրվեր Անդրանիկի, Նժդեհի, Դավիթ-Բեկի, Մխիթար Սպարապետի եւ մյուս հերոսների կողքին այն պարզ պատճառով, որ չգնահատեցին իրենց ծեռքբերումը՝ հերոսի կոչումը: Երբեմնի փառքը փոշիացրին նեղ անձնական, մանրախնդիր հարցերը պետականությունից ու հայրենիքից վեր դասելով, չկարողացան զսպել նյութականի նկատմամբ ունեցած գայթակղությունը:

Սակայն դեռեւս ուշ չէ ուշքի գալու համար, անհրաժեշտ է սթափվել ու մեղմել վրեժխնդրության ծարավը: Հակված չենք մտածելու, որ այս ամենի մեջ միայն Ս. Բաբայանն ու Արկադի Ղուկասյանը մեղքի իրենց բաժինն ունեն, նրանց պայքարին հետեւող, գուցեեւ այս կամ այն թեւին ոգեւորողներ կային, որոնք իրենց աչքի առջեւ ունեին այսօրինակ պատկերը: Նաեւ նրանց սթափվելու ժամանակն է, որպեսզի գոնե արդարադատությունն իրենց մենաշնորհը չդարձնեն:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆ +...» ԳՈՐԾ

Սեւ փողերի տոկոսը

մեկ տարում Արցախում ընթացող ներքաղաքական պայքարին: Արցախի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների վերնախավի կողմից Սամվել Բաբայանին նետված ծեռնոցը շատ կտրուկ ու կոշտ պայքարի տարր էր պարունակում: Երկկողմանի անհանդուրժողականությունը վաղուց հասել էր էթիկայի ու պաշտաճության սահմանագծեր՝ տեսարաններ սարքելով ժողովրդի համար: ԼՂՀ վարչապետը հայտարարում է, թե թույլ չեն տա, որ սեւ փողերն օգտագործվեն իշխանության դեմ, Սամվել Բաբայանն պատկանում է վարչապետին եւ այդպես շարունակ:

Թեպետ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը բոլորին հավաստիացնում էր, թե Արցախում ներքաղաքական վիճակը կայուն է, սակայն ինքն էլ վստահ գիտեր, որ դա ավելի շուտ Արցախում կայունություն տեսնելու ներշնչանք էր, քան իրական կայունություն: Վերջին անգամ, երբ նա մեկ անգամ եւս արտասանեց այս խոսքերը՝ մի քանի տողե անց դարձավ իր իսկ ներշնչած կայունության զոհը: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ ամիսներ առաջ ԼՂՀ նախագահը հայտարարեց, թե բարեփոխումների գործընթաց է սկսում Արցախում: «Պրոբլեմը նրանում էր, որ բոլոր մեր կառույցները բանակի ղեկավարի ճնշման տակ էին եւ դժպնդում են, որ խորացող հակասության դեմն ուզեցել են առնել ամիսներ առաջ՝ փորձում էին հաշտության եզրեր գտնել երկուսի միջեւ, սակայն իրականությունն այն էր, որ հակասությունն օրեցօր խորանում էր, եւ կողմերից ոչ ոք անձնական վրեժխնդրությունից այն կողմ չէր ուզում տեսնել պետականության, հայրենիքի շահը: «Միասնական ճակատով սկսվել է պատերազմ տնտեսական դաշտում, եւ հասարակությունը փորձում է վերացնել «պատերազմի սինդրոմը», արձանագրում էր մամուլը: Հինգ տարի արցախյան պատերազմը փաստացի ղեկավարած Սամվել Բաբայանին հեռացրին պաշտպանության նախարարի պաշտոնից, որը, բնականաբար, հոգեբանորեն խիստ բացասական ազդեցություն պետք է թողներ Ս. Բաբայանի ու նրա շրջապատի վրա: «Ես իրեն չնշանակեցի պաշտպանության նախարար եւ գտնում եմ, որ ավելի արժանավոր անհատի նշանակեցի: Ս. Բաբայանը փորձում է իր դերն ունենալ եւ՝ բանակի, եւ՝ նախարարության ոլորտում, եւ տնտեսության հաշտեցրում», հպարտությամբ հայտարարեց նախագահը: Չկռադասված այս «հաղթանակից» ոգեւորված հավելեցին «իրական գործեր են հարուցված, որոնք տեղեր նրա անունը նշվում է»:

Ինչպես շեշտադրում է նախագահը՝ Ս. Բաբայանի ազդեցության ներքո էին եւ բանակը, եւ տնտեսությունը, եւ իշխանությունը: Միանգամից կտրել նրան այս երեք լծակներից՝ չափազանցված կլիներ եւ, բնականաբար, անհանդուրժողական մթնոլորտ պետք է ստեղծվեր: Տարիներ արդեն տիրապետելու սովոր անձը հոգեբանորեն չէր կարող համակերպվել խաղից կտրուկ դուրս հայտնվելու վիճակին: Սի՞թե դա մի օրում լուծվելիք խնդիր էր: Պարբերաբար Արցախ այցելող մեր գործընկերները վկայում էին, որ նորաստեղծ պետության բնակիչների մեջ վախի տրամադրությունն է գերիշխողը՝ սարսափով են արտասանում Ս. Բաբայանի անունը՝ հանկարծ ոչ ոք չլսի: Նրանց չհավատալու իրավունք չունենք: ԼՂՀ նախագահը նույնպես պնդում էր, որ «հասարակությունն ուզում է ազատվել «պատերազմի սինդրոմից»: Խոստովանենք սակայն, որ «ազատվելու» մեթոդները ճիշտ չէին ընտրված՝ հինգ տարի շարունակ արցախյան պատերազմը ղեկավարած, հերոսացած անձին անթույլատրելի է մեկընդմիշտ հայտարարելը՝ «դու մեզ այլեւս պետք չես»: Բնականաբար, Ս. Բաբայանը չէր գնալու տանը նստեր, նա պետք է մտածեր համարժեք գործողությունների՝ վրեժխնդրության մասին, որի պատասխանը շատ ավելի կտրուկ էր, հատել էր անձնական վրեժխնդրության սահմանագիծը: Դա Արցախի համար ճակատագրական կրակոց էր:

Պատերազմի սինդրոմը

Հատկապես վերջին հինգ տարում մենք ականատես եղանք այս սինդրոմի տարաբնույթ դրսեւորումների, որոնք հաղթանակած երկրի պատերազմի հերոսներին ժողովրդի աչքում հերոսազրկելու, վնասազրկելու փոխարեն՝ հակակրանք, երբեմն նաեւ ատելություն սերմանեց նրանց նկատմամբ: Այսօր ժողովուրդը ցավով նկատում է, որ նրանք ապրում են դղյակներում եւ երբեմն արտասահմանյան թանկարժեք մեքենաներով: Իհարկե, պատերազմի իսկական վետերաններն արժանի են լավ ապրելակերպի ու մեծարման, որը նրանց պետք է պարգեւեր պետությունը, եւ որը պահանջելու իրավունք ունեին նրանք: Սակայն մենք տեսանք, որ փաստացի «կռվող տղաների» ֆենոմենն ուռճացվեց, եւ մարտադաշտից վերադառնալուց հետո նրանք չբավարարվեցին նույնիսկ քաղաքականության ասպարեզում ազդեցություն ունենալուց, տիրապետող դարձան նաեւ տնտեսության ոլորտում: Ընդգծենք, այն իշխանավորների թողտվությամբ ու օժանդակությամբ, որոնք նրանց զենքի կարիքն ունեին իրենց իշխանությունն ամրապնդելու համար: Սակայն սա պատերազմի սինդրոմի մի դրսեւորումն է: Մենք ականատես եղանք նաեւ մյուս տարբերակին. նրանք, ովքեր իրենց արժանի են համարում լծակներին տիրապետելու ու արժանավայել ապրելու համար եւ իրենք իրենց վերնախավ հռչակեցին, նույն մոտեցումը չցուցաբերեցին մարտական ընկերների նկատմամբ: Մամուլը բազմիցս գրել է, որ զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներն ամիսներ շարունակ զրկված են անգամ պետական չնչին նպաստից: Ինքս եմ ականատես եղել՝ ոտքից հաշմված ազատամարտիկը երբեմնի մարտական ընկերոջից, որն այժմ պետական պաշտոնյա է՝ դրամ էր խնդրում իր դպրոցահասակ երեխաներին գրենական պիտույքներ գնելու համար: Մեկ այլ դեպքում՝ «Արաբո» ջոկատի հրամանատարն ու մի տասնյակից ավելին անդամները երեք տարի անտեսվեցին ու ճնշման ենթարկվեցին իրենց երբեմնի մարտական ընկերների կողմից, որոնք այդ ժամանակ հանրապետության վերնախավն էին կազմում:

Պատմությունից մեզ հայտնի է՝ ամեն պատերազմ իր հերոսն է ծնում, մի անհատականություն, հավաքական մի կերպար, որի օրինակով սերունդներ են դաստիարակվում: Իմ կարծիքով, արցախյան պատերազմը չնայած հաղթանակած լինելուն՝ չունեցավ իր հավաքական հերոսի կերպարը, այն անհատը, որի անունը կդրվեր Անդրանիկի, Նժդեհի, Դավիթ-Բեկի, Մխիթար Սպարապետի եւ մյուս հերոսների կողքին այն պարզ պատճառով, որ չգնահատեցին իրենց ծեռքբերումը՝ հերոսի կոչումը: Երբեմնի փառքը փոշիացրին նեղ անձնական, մանրախնդիր հարցերը պետականությունից ու հայրենիքից վեր դասելով, չկարողացան զսպել նյութականի նկատմամբ ունեցած գայթակղությունը:

Սակայն դեռեւս ուշ չէ ուշքի գալու համար, անհրաժեշտ է սթափվել ու մեղմել վրեժխնդրության ծարավը: Հակված չենք մտածելու, որ այս ամենի մեջ միայն Ս. Բաբայանն ու Արկադի Ղուկասյանը մեղքի իրենց բաժինն ունեն, նրանց պայքարին հետեւող, գուցեեւ այս կամ այն թեւին ոգեւորողներ կային, որոնք իրենց աչքի առջեւ ունեին այսօրինակ պատկերը: Նաեւ նրանց սթափվելու ժամանակն է, որպեսզի գոնե արդարադատությունն իրենց մենաշնորհը չդարձնեն:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բաց նամակ հայ ժողովրդին

Սկիզբը էջ 1

Ես 46 անգամ այցելել եմ ձեր հայրենիքները՝ Հայաստան եւ Արցախ: Այդ այցելությունների մեծ մասը կատարել եմ Ադրբեջանի հետ դառը պատերազմի օրերին, եւ ականատես եմ եղել ձեր ժողովրդի բացառիկ խիզախության եւ արժանապատվության դրսեւորումներին: Դուք կռվում էիք անկարելի պայմաններում՝ փրկելու ձեր ընտանիքներին, ձեր հողերը, ձեր ազատությունը եւ ձեր մշակութային եզակի ժառանգությունը: Դուք հաղթանակեցիք այդ պատերազմում եւ Արցախի քաջարի հայերն այդ օրերից սկսած՝ լծվել են վերակառուցման աշխատանքներին:

Բայց դուք այժմ կանգնած եք խաղաղությունը նաեւ ձեր անկախությունը կորցնելու վտանգի առաջ: Եթե անմիջապես չգործեք, դուք կորցնելու եք ոչ միայն Արցախի սուրբ հողակտորը, այլեւ Հայաստանը: Մեկ ուրիշ ցեղասպանություն է տեղի ունենալու:

Երկու վտանգ է սպառնում ձեր ազգին: Առաջինը ներքին է եւ կործանարար: Հայաստանի ներկա ղեկավարությունը մեծ ճնշումների տակ է համաձայնություն կնքելու եւ, թվում է, այնքան է զիջումների գնում, որ կարող է ի չիք դարձնել թափված արյունը բոլոր նրանց, ովքեր զոհաբերեցին իրենց հանուն Արցախի: Մի՞թե թողնելու եք, որ ձեր քաղաքական ղեկավարները Հայաստանի հարավային հողերը հանձնեն, եւ այդպիսով Հայաստանն ամբողջովին կտրեն Իրանից: Մի՞թե թողնելու եք, որ հանձնեն բուֆերային գոտին, որ զինադադարի տարիներին պահպանել է ձեր ժողովրդին: Մի՞թե թողնելու եք, որ Արցախը վերադառնա իր անորոշ ու խոցելի կարգավիճակին՝ ի չիք դարձնելով այն արյունը, որ թափվեց: Վերջին կարգավիճակն ավելի վատ է լինելու առաջինից եւ պատերազմն էլ տանուլ տված պիտի լինեք:

Երկրորդն արտաքին է՝ կանխատեսելի եւ մոտալուտ: Ադրբեջանը Չեչնիայի արմատական իսլամիստների համագործակցությամբ թափով պատրաստվում է նոր ռազմական հարձակումների: Այնպես որ, ներսում իրենց պաշտոններին կառչող ղեկավարների առկայությամբ թուլացած լինելով, դուք դիմակայում եք ավելի մեծ ռազմական սպառնալիքի, քան երբեւէ, քանի որ ձեր դեմ է դուրս գալիս ոչ միայն իր թիկունքում Թուրքիան ունեցող Ադրբեջանը, այլեւ մարտականորեն տրամադրված արմատական իսլամիստները, որոնք մտադրվել են միանալ Ադրբեջանին եւ նվաճել ամբողջ Կովկասը: Իսկ Ղարաբաղը նրանց առաջին թիրախներից մեկն է: Վերջերս Բաքվի «Ազադլիգ» թերթի լրագրողներ Էլխան Շահինօղլուն եւ Ագասի Հանին տված հարցազրույցում Բաքվում Չեչնիայի «դեսպան» Ալի Ուլուխաեւը հայտարարել է. «Չեչենները չեն բավարարվելու միայն իրենց երկիրն ազատագրելով»: Չեչեն իսլամիստ ղեկավարության համար միայն տարածքային, ամբողջական «լուծումն» է ընդունելի: Նա վեր է հանել հատկապես Ղարաբաղի հարցը լուծելու խնդիրը, քանի որ «Լեռնային Ղարաբաղը միշտ էլ եղել է Ադրբեջանի անքակտելի մասը»:

Սիրելի հայ ընկերներ, դուք երկար սպասեցիք վերականգնելու անկախ Հայաստանը: Այժմ, քիչ ժամանակ անց, դուք այն կորցնելու եզրին եք: Դուք մի ցեղասպանություն ապրել եք 20-րդ դարում: Մի՞թե թույլ եք տալու մեկ ուրիշը՝ 21-րդ դարում: 1,5 մլն հայեր կոտորվեցին 1915-ի սարսափելի տարում: Բայց վերջին ժամանակներում դրանից էլ ավելի հայեր հեռացել են Հայաստանից: Ո՞վ է մնալու պաշտպանելու եւ վերակառուցելու ձեր հայրենիքը:

Քանի դեռ ազատություն ունեք Հայաստանում եւ Արցախում, խնդրում եմ օգտագործեք այն՝ վերականգնելու ժողովրդավարությունն ու արդարությունը եւ պատրաստվեք պաշտպանելու հիմքերդ ձեզ բոլոր նրանցից, ովքեր այժմ իսկ խոսում են ձեզ նվաճելու մասին: Չեզանից ովքեր ազատության մեջ են ապրում սփյուռքում, խնդրում եմ, կրկնապատկեք ձեր պաշտպած հայրենիքի միջազգային պաշտպանությանն ուղղված ձեր ջանքերը: Մի օգտագործեք ձեր բոլոր ջանքերը միայն անցյալի՝ պատմական ցեղասպանության (ինչքան էլ դա կարեւոր լինի) ճանաչումը ձեռք բերելու նպատակներով, այլ զորակցեք՝ կանխելու նորը:

Եթե դեպքերի ներկա ընթացքը չդադարեցվի, երեւանում ձեր ղեկավարությունը ճակատագրականորեն թուլացած է լինելու եւ դավաճանած երկրին: Դուք ի վիճակի չեք լինելու պաշտպանելու հիմքերդ ձեզ բոլոր նրանցից, ովքեր իրենց վճռականությունն են հայտնում նվաճելու ձեզ եւ կերտելու իսլամական մի Կովկաս: Եվ այդ ժամանակ բոլոր զոհերը, ովքեր իրենց կյանքն են տվել հանուն ձեր պատմական հողաբերտի, իզուր են լինելու:

Նպատակս հուսահատություն սերմանելը չէ: Ընդհակառակը, հաստատ հավատացած եմ, որ նախախնամության սահմանումով անկախ Հայաստանն ու Արցախը բարգավաճելու են՝ դառնալով Կովկասում կայունության եւ բարեկեցության պատվարներ: Բայց սա իրականություն չի դառնալու եւ վաղարագույնն է տեղի ունենալու, եթե թույլ տվի շարունակել ներկա քաղաքական դինամիկան: Հրամայական պահանջ է այժմ, որ ամբողջ հայ ժողովուրդը, հայրենիքում թե սփյուռքում, միաբանվելով վերսին իր ճիշտ հունի մեջ դնի Հայաստանի եւ Արցախի վերակենդանացման աշխատանքները: Արեւմուտքում սփյուռքի դերն այս հարցում չափազանց մեծ է, քանի որ Ս. Նահանգների եւ եվրոպական գլխավոր երկրների կառավարությունների վճռական միջամտությունը կարող է իսլամ արմատականներին եւ նրանց թիկունք կանգնողներին ետ կանգնեցնել իրենց մտադրությունների իրագործումից: Ավելին, արեւմտյան կառավարությունների եւ ընկերությունների կողմից նավթի հետազոտման եւ խողովակաշարերի տեղադրման հեռանկարների առավել լուրջ վերաքննությունն անպայմանորեն կգրկի Կովկասի արմատականներին իրենց եկամտի նշանակալի մասից եւ դրանից բխող քաղաքական ազդեցությունից: Սրանք վճռական միջոցառումներ են, որոնք երեւանի եւ Ստեփանակերտի ղեկավարությունները չեն կարող առանձին իրականացնել: Դուք եւ ձեր ընկերները պետք է մոբիլիզացնեք ձեր ջանքերը եւ աշխատեք միասին, քանի դեռ ուշ չէ Հայաստանում ու Արցախում ապրող մեր բոլորի կողմից սիրված եւ հարգված ժողովրդի համար:

Խնդրում եմ ներեք ինձ, եթե ձեզ վիրավորում եմ, բայց չեմ կարող այլեւս լուռ մնալ: 1992-ի հունվարյան պատերազմի օրերին չէի կարողանում քնել Անգլիայում, մտածելով, որ Արցախում ժողովուրդը տառապում եւ մահանում է առանց դեղորայքի: Ես պետք է գործեի, անեի ինչ կարող էի՝ փրկելու ձեր ժողովրդի կյանքը: Այժմ մեկ ուրիշ պատերազմի եւ մի նոր ցեղասպանության սարսափն է ինձ արթուն պահում: Միակ բանը, որ կարող եմ անել, խոսելն է, զգուշացնելն է եւ ձեզ գործելու մղելը՝ քանի դեռ ուշ չէ:

Սրանով ավարտում եմ իմ խոսքը: Ավելին անել չեմ կարող:

Ամբողջ սրտով եւ սիրով աղոթում եմ ձեզ համար:

ԱԶԳ

Միջազգային

Հետկոմունիստական ժամանակաշրջանում Ռուսաստանն ասես երկընտրանքի առջեւ լինի. վերադառնալ իր հին, սլավոնական արմատներին կամ շրջվել դեպի Արեւմուտք եւ Եվրամիություն:

– Դա իրոք արմատական հարց է, որը հիշեցնում է ցարական հին խորհրդանշանը՝ երկգլխանի արծիվը: Մենք տատանվում ենք գերտերություն դառնալու եւ ազատագոհողություններ: Բոլշեւիկյան այդ մախսիմալիզմը, յակոբինյան այդ կեցվածքը մեկուսացրին նրանց: Արդեն 1992 թ. բարեփոխումների ժամկետն ավարտվեց: Դրանից հետո կառավարությունները նույն պարն են պարել՝ մեկ քայլ առաջ, մեկ քայլ ետ: Ելցինը բարեփոխումներին հավանություն էր տալիս, եթե դրանք ամրապնդում էին իր իշխանությունը:

– 1998 թ. օգոստոսյան ճգնաժամը հարվածեց միջին խավին: Իսկ առանց դրա չկա տեւական ժողովրդավարություն:

– Միանգամայն ճիշտ է: Կայուն հասարակությունն ունենում է ուժեղ միջին խավ: Օրինակ, Արեւելյան Եվրոպայում այն կազմում է բնակչության 30-40 տոկոսը: Ռուսաստանում կստեղծվեր հեղափոխական իրավիճակ, բայց համատարած աղքատությունները չեզոքացնում են պայթյունը. մարդիկ հարկ չեն վճարում, պետական պատասխանատուները առգրավում են մասնավոր ունեցվածքը, ոստիկանությունը պատժանում է մաֆիական կառույցներին... Կաբառակերությունը նման է պատի, որից մեկ աղյուս հանելու դեպքում ամբողջ կառույցը փուլ կգա: Մենք սվերային հասարակության մեջ ենք, որի արմատները սնվում են խորհրդային մայրությունից:

Մենք չունենք ոչ իսկական բազմակարծություն, ոչ էլ իսկական խորհրդարան եւ կուսակցություններ: Առաջվա պես կախված ենք անդրկուլիսյան խարդավանքներից: Ժողովրդավարության ուղին բռնած բոլոր երկրները ստեղծում են մարդկանց եսամոլությունը սահմանափակող արգելքներ: Մինչդեռ նոր Ռուսաստանը վերադարձել է նախակոմունիստական ավտորիտարիզմին: Նախագահը ցարն ունի լիակատար իշխանություն, չունենալով որեւէ պատասխանատվություն: Նա շնորհներ է բաշխում օլիգարխներին, իր ընտանիքին եւ մերձավորներին: Դա «անզոր ամենազորություն» է: Վկա՝ Ելցինը նշանակեց իր իրավահաջորդին:

– Բայց Վլադիմիր Պուտինը մեծամասնության արտովն է:

– Պուտինն ընկալվում է ոչ միայն իբրեւ Ելցինի իրավահաջորդ, այլեւ իբրեւ այդ համակարգի այլընտրանք: Նա հաստատակամ է եւ գործունյա: Բացի դրանից, նա քաղաքական դեմք չունի, եւ ամեն ոք, լինի ազգայնական, համայնավար թե ժողովրդավար, կարծում է, թե կկարողանա ազդել նրա վրա: Կեղծ ժողովրդավարական փորձարարության ութ տարիներից հետո ռուսաստանցիների մեծամասնությունը նախընտրում է կարգուկանոնը: Պատուհաններից քարշ օդի ներհոսից հետո նրանք հիմա ուզում են վերադառնալ վանդակ:

– Պուտինի գլխավոր միավորիչ գաղափարը հայրենասիրությունն է:

– Պուտինը մշտապես խոսում է Ռուսաստանի հզորացման մասին: Կարծում եմ, նա կփորձի հասատել ինքնակալության որեւէ ձեւ՝ ազատ շուկայի տարրերով: Բայց շուտով նա կհասկանա, որ այս երկրում անհնար է կարգապահություն հասատել: Այդ ժամանակ Պուտինը կկանգնի ընտրության առջեւ. հրաժարվել ընտրովի միապետությունից եւ սլավոնասիրական գայթակղությունից կամ վերսկսել հին պարը՝ մեկ քայլ առաջ, մեկ քայլ ետ: Պուտինը գործնապաշտ է, բայց չունի գաղափարներ, իսկ դա ցինիզմ է: Ռուսաստանին գաղափարախոսություն է պետք: Նացիզմը եւ ֆաշիզմը Ռուսաստանում անհնար են: Բայց մենք կարող ենք ունենալ Վլադիմիր Առաջին:

– Ռուսաստանը կարո՞ղ է ստեղծել յուրօրինակ ժողովրդավարություն՝ կես-սլավոնական եւ կես-եվրոպական:

– Խորապես համոզված եմ, որ երրորդ ուղին անհնար է: Արդեն 15-րդ դարից սկսած Ռուսաստանն ընտրել է զարգացման իր ուղին, որը ոչ եվրոպական է, ոչ էլ ասիական, այլ տանում է դեպի բյուզանդական տիպի գերտերության ստեղծում: Երկրորդ աշխարհամարտից հետո մենք ապարդյուն փորձեցինք աշխարհին պարտադրել մեր կարգերը: Այսօր այլեւս չենք կարող հավակնել անկախ լուծման: Համախմբված Եվրոպայի եւ զարգացող Չինաստանի արանքում ընկած Ռուսաստանը պետք է ընտրություն կատարի Արեւմուտքի ազատական ժողովրդավարության եւ քաղաքական ժողովրդավարության միջեւ:

– Ուրեմն Ռուսաստանում ամեն ինչ հնարավո՞ր է:

– Ծայրահեղ իրավիճակները միշտ հավանական են: Իվան Սահոդի, Պետրոս Մեծի, Լենինի եւ Ստալինի-որոշ ամեն ինչ կախված է եղել վերեւների անցուդարձից, այդ ղեկավարների շրջապատի 200 անձանցից, որոնց ձեռքին էին իշխանության լծակները: Ռուսական հասարակությանը կարելի է հեշտությամբ համոզել: Բայց ընդհանուր առմամբ կան նաեւ դրական արդյունքներ. ոմանց մոայլ կանխատեսումներին հակառակ, մենք խուսափեցինք համատարած տրոհումից, զանգվածային քաղաքացիական կռիվներից, արյունալի պետական հեղաշրջումներից: Կարողացանք նաեւ պահպանել մի շարք արժեքներ: Ճիշտ է, հիմա ցարն ընտրվի է, բայց դա էլ կարելի է առաջընթաց համարել:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒ

Լ. Շեւցովա. «Ռուսաստանն ընտրովի միապետություն է»

Տարիներ առաջ մոսկվացի հայտնի քաղաքագետ Լիլյա Շեւցովան, Մ. Գորբաչովի հրավերը մերժելով դարձավ Բ. Ելցինի խորհրդականը: Հետագայում հիասթափվելով կապերը խզեց Կրեմլի հետ՝ դառնալով «կոսմոպոլիտ» եւ անկախ վերլուծաբան: Ներկայումս նա ապրում է թե Մոսկվայում, եւ թե ամերիկյան «Քարնեգի» հասատատությունում: Փարիզյան «Էքսպրես» հանդեսի թղթակիցներին նրա տված հարցազրույցը ներկայացնում ենք որոշ կրճատումներով:

կան ժողովրդավարությանը հետեւելու ձգտումների միջեւ: Ռուսաստանի բոլոր սոցիալական խմբերի ներկայացուցիչների 70 տոկոսը կողմ է խոսքի ազատությանը, պետության նկատմամբ քաղաքացու գերակայությանը, բայց միաժամանակ երեք բնակչից մեկը պատրաստ է այդ արժեքները զոհաբերել հանուն կարգուկանոնի: Հեշխորհրդային հասարակությունն ապրում է հակասություններով:

– Ռուսները դժգոհ են Արեւմուտքից, բայց նաեւ հմայված են նրանով:

– Այո: Արեւմուտքը կուզենար, որ Ռուսաստանը հարի եվրոպական քաղաքակրթությանը. Ռուսաստանն էլ նույնն էր ուզում, ակնկալելով մի նոր Մարշալի պլան՝ զանգվածային տնտեսական օգնություն: Բայց նա հուսախաբ եղավ: Եվրոպական երկրները, մանավանդ Գերմանիան, տնտեսական ու ֆինանսական մեծ օգնություն ցուցաբերեցին, բայց պատրաստեցին բարեփոխման միայն մեկ մոդել, որն ըստ էության պարզունակ էր եւ բոլշեւիկյան՝ հիմնված լինելով մեկ ղեկավարի գերակայության վրա: «Շուկա ստեղծենք, իսկ ժողովրդավարությունը հետո կլինի», ասում էին բարեփոխակաները: Իրականում Արեւմուտքը թերագնահատեց ժողովրդավարություն սովորելու ռուսների ունակությունը եւ նպաստեց ընտրովի միապետության կազմավորմանը:

Դա այսպես եղավ: 1993 թ. սկզբներին Ելցինը Հելմուտ Քոլին հրազեկ դարձրեց խորհրդարանը ցրելու իր մտադրությանը: Քոլը խոսեց ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի ղեկավարների հետ: Առանց նրանց լուռ համաձայնության, Ելցինը նման քայլի չէր դիմի, եւ հնարավոր կլիներ ժողովրդավարության հիմքեր ստեղծել: Խորհրդարանի գնդակոծումը շոքայական ռեակցիա առաջ բերեց՝ օրինականացնելով բռնությունը: Դա թույլ տվեց սանձազերծել Չեչնիայի առաջին պատերազմը: Դա եւս արվեց Արեւմուտքի համաձայնությամբ. Քլինթոնը Ելցինին նույնիսկ համեմատեց Աբրահամ Լինքոլնի հետ: Երկու դեպքերում էլ Արեւմուտքի պատասխանատվությունը մեծ էր:

– Սակայն ներկա տնտեսական անկումն Արեւմուտքի մեղքը չէ:

– Տնտեսական ծախողման պատճառներից մեկն այն է, որ բարեփոխակաները վարվեցին Պետրոս Մեծի նման եւ չբացատրեցին իրենց կամայական միջոցառումների իմաստը: Նրանք կարծում էին, թե հարկավոր է արագ գործել, քանի դեռ զանգվածները քնած են: Դա ճամահրանք էր ժողովրդի հանդեպ, որը, սակայն, պատրաստ էր զոհողություններ: Բոլշեւիկյան այդ մախսիմալիզմը, յակոբինյան այդ կեցվածքը մեկուսացրին նրանց: Արդեն 1992 թ. բարեփոխումների ժամկետն ավարտվեց: Դրանից հետո կառավարությունները նույն պարն են պարել՝ մեկ քայլ առաջ, մեկ քայլ ետ: Ելցինը բարեփոխումներին հավանություն էր տալիս, եթե դրանք ամրապնդում էին իր իշխանությունը:

– 1998 թ. օգոստոսյան ճգնաժամ

ՀԱՄԱՌՈՏ

Ջորջ Բուշ. «Ինձ հարկավոր է թուրքերի օգնությունը»

ՍՏԱՄԲՈՒԼ, 5 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հանրապետական կուսակցությունից ԱՄՆ նախագահի թեկնածու Ջորջ Բուշը, որն իր նախընտրական քարոզարշավի ընթացքում հստակ հայտարարել էր, որ նախագահ ընտրվելուց հետո բոլոր ջանքերը կգործադրի, որպեսզի ԱՄՆ ժողովուրդը պատշաճորեն ճանաչի Հայոց ցեղասպանության փաստը, ըստ երեւույթին «կտրուկ փոխել է իր դիրքորոշումը»: Ինչպես հաղորդում է թուրքական «Թյուրքիե» թերթը, վերջերս Ամերիկայի թուրքական ասոցիացիաների դաշնության նախագահ էջեմեն Բաջիսի հետ ունեցած հանդիպման ժամանակ, որին ներկա է եղել նաեւ Նյու Յորք նահանգի նահանգապետ Ջորջ Պատակին, Ջ. Բուշ-կրտսերն արել է հետեւյալ հայտարարությունը. «Ինձ հարկավոր է թուրքերի օգնությունը, ինչպես մինչեւ ընտրությունները, այնպես էլ դրանցից հետո»: Ջորջ Բուշի վերջին հայտարարությունների ֆոնի վրա թուրքերի հետ ընկերանալու նման ձգտումը չի կարող որոշակի տարակուսանք չառաջացնել:

Էլչիբեյը փնտրում է Թուրքիայի հովանավորությունը

ՍՏԱՄԲՈՒԼ, 5 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանի նախկին նախագահ, «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության ղեկավար Աբուլֆազ Էլչիբեյի Թուրքիա կատարած վերջին այցը մեկնաբանվում է իբրեւ Թուրքիայից եւ մասնավորապես Թուրքիայի «Ազգայնական շարժում» կուսակցությունից աջակցություն ստանալուն միտված քայլ: Էլչիբեյը հանդիպել է նախարարական աթոռ զբաղեցնող 4 ազգայնականների հետ, որոնք հայտնել են Ադրբեջանում առաջիկա նախագահական ընտրություններում Էլչիբեյի թեկնածությանը սատարելու իրենց մտադրության մասին: Էլչիբեյը Թուրքիա է ժամանել «Ազգայնական շարժում» կազմակերպության պատգամավոր Ջեյլանի անձնական հրաքիռով՝ առողջական վիճակի ստուգման եւ թուրք քաղաքական գործիչների հետ հանդիպումներ անցկացնելու նպատակով: Հիվանդանոցում գտնվելու ժամանակ նրան են այցելել փոխվարչապետ Բահչելին եւ մի շարք նախարարներ: Թուրքիայի ԶԼՄ-ները Էլչիբեյին բնորոշում են որպես թուրքամետ կողմնորոշում ունեցող գործիչ:

Ճապոնիայի նոր վարչապետն է Իոսիրո Մորին

ՏՈԿԻՈ, 5 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ճապոնիայի նոր վարչապետ է դարձել կառավարող լիբերալ-դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղար Իոսիրո Մորին: Նա այդ պաշտոնում փոխարինել է Կեյզո Օբուտին, որն անցած կիրակի օրը կաթվածահար լինելուց հետո գտնվում է կոմայի մեջ: Մորին պաշտոնապես առաջադրվել է իր կուսակցության կողմից եւ նրա թեկնածությանը հավանություն են տվել խորհրդարանի երկու պալատները:

ՌՈՅԵՐ-ՄԱՍՍԻՄՊՐԵՍ

Իր առաջին հրամանագրով նա նշանակել է բոլոր նախարարներին՝ նախօրեին հրաժարական տված կառավարության պաշտոններում: Ի. Մորին խոստացել է շարունակել ազգային տնտեսության աշխուժացմանն ուղղված քաղաքականությունը: Ինչպես նշում է BBC-ն, Լիբերալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարությունն այժմ կհամոզի Մորիին նշանակել վաղաժամկետ ընտրություններ՝ հուսալով ի շահ օգտագործել հիվանդությունից ընկած Օբուտիի նկատմամբ եղած հասարակական համակրանքը:

Վլադիմիր Ժիրինովսկի. Ոչ ոք չի մարտնչի Ռուսաստանի դեմ Վրաստանի եւ Ադրբեջանի պատճառով

ԵՐԵՎԱՆ, 5 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ-ԹՈՒՐԱՆ-ԲԼԱՔ ՍԻ ՊՐԵՍ: Ռուսաստանի նկատմամբ Ադրբեջանի բարեկամական քաղաքականությունը գործնականում պետք է արտահայտվի նրանով, որ «կասպիական ողջ նավթը պետք է փոխադրվի Ռուսաստանով, եւ Արեւմուտքը չպետք է հիթը խոթի կովկաս»: Հակառակ դեպքում «Ռուսաստանի, Իրանի, Հայաստանի եւ Իրաքի շահերը թույլ չեն տա իրացնել Բաքու-Ջեյհան նավթատարի նախագիծը», հայտարարել է ՌԴ Պետդումայի փոխխոսնակ, Լիբերալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Վլադիմիր Ժիրինովսկին՝ «Թուրան»-ի թղթակցի հետ զրույցի ժամանակ անդրադառնալով Ադրբեջանի եւ Ռուսաստանի հարաբերությունները բարելավելու հնարավորությանը: ՆԼԴԿ առաջնորդի կարծիքով, դա կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե «Ալիեւը դադարի բլեֆ անել եւ պնդել, թե Ռուսաստանի նկատմամբ բարեկամական քաղաքականություն է վարում»:

Ժիրինովսկին նշել է, որ Ռուսաստանի նոր իշխանությունները կընթանան աշխարհի այն երկրների ու տարածաշրջանների նկատմամբ ճնշումն ուժեղացնելու ուղիով, որտեղից Ռուսաստանին վտանգ է սպառնում: Նրա կարծիքով, այդպիսի տարածաշրջաններ են հանդիսանում, առաջին հերթին, Կովկասն ու Կենտրոնական Ասիան, որտեղ առաջիկա տարիներին Ռուսաստանը կմարտնչի: Ժիրինովսկին հայտարարել է, որ Մոսկվան անխուսափելիորեն «կխստացնի» իր հարաբերությունները Հարավային Կովկասի երկրների հետ: Ռուսաստանի նոր ղեկավարությունը գիտակցում է, որ իրեն պետք է շրջապատի մոսկվայամետ վարչակարգերով, այլապես, վաղ թե ուշ, ստիպված է լինելու մարտնչել այդ երկրների դեմ՝ ինչպես Չեչնիայի դեմ: Շարունակելով Կովկասում Ռուսաստանի շահերի թեման՝ Ժիրինովսկին ասել է, որ Բաքուն եւ Թբիլիսին զուր են հույսեր փայփայում, թե Արեւմուտքը կպաշտպանի իրենց՝ տարածաշրջանում իրավիճակը բարդանալու դեպքում: «Ոչ ոք չի մարտնչի Ռուսաստանի դեմ Վրաստանի եւ Ադրբեջանի պատճառով», նշել է նա, ավելացնելով, որ Ռուսաստանի նոր կառավարությունը «գիտակցում է» երկրի պետական շահերը պաշտպանելու համար պատերազմներ մղելու անհրաժեշտությունը:

ԱԶԳ

Մշակույթ

Տարանավոր երաժիշտների գալստյանն սպասում էին առանձնակի անհամբերությամբ: Պատճառներից մեկը որպես մենակատար Ռուբեն Ահարոնյանի ելույթն էր 3. Բրամսի Զուբակի եւ նվագախմբի կոնցերտում: Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը ղեկավարում էր Կ. Դուրգարյանը: Հայաստանի ժողովրդական արտիստ Ռուբեն Ահարոնյանը՝ ազգի պարծանքն այս անգամ եւս հաստատեց իր պրոֆեսիոնալ եզակիությունը: Զուբակի արվեստի հեղինակությունների հետ մրցող բարձրակարգ վիրտուոզ Ահարոնյանը Բրամսի կոնցերտը կատարելիս ցուցաբերեց հիրավի բախյան իմաստնություն: Նրա կատարողական նկարագրի նախկին գծերին ավելացել են նորերը (թերեւս, դրանք պայմանավորված են վերջին տարիների հառաջակային գործունեությամբ): Դրանք են զգացմունքների ասկետիզմը, լարված արտահայտչածեւերի բացակայությունը եւ ոգու նոր հանգստությունը: Բոլոր մասերի, հատկապես առաջինի, փոքր-ինչ դանդաղեցված տեմպերը եւ թեթեւ կարոտի տրամադրությունը մատնում էին Ահարոնյանի մեջ կատարված փոփոխությունը:

Տպավորիչ էր երկրորդ մասի երանգավորումը: Ահարոնյանի ծեռքի Ստրադիվարիուսի ջութակի հնչողությունը հիշեցնում էր ոսկե եւ արծաթե թելերով ասեղնագործություն: Այդ արտաքին գեղեցկության հետեւում թաքնված էր կորստի ցավ ապրող ներաշխարհի հայեցումը: Ահարոնյանն իր ելույթը նվիրել էր Կարդ Դոմբաեւի հիշատակին: Եվ գուցե ի հիշատակ սիրելի մանկավարժի նա կատարեց Բախի սոնատի Adagio-ն եւ Կոմիտասի «Կռունկը»:

Բրոդինի անվան խառյակի ելույթը նույնպես հուշային էր. նվիրված էր թավջութակահար Գերոնտի Թալալյանի հիշատակին: Անչափ բարդ ծրագիրն ընդգրկում էր Բեթհովենի վերջին կվարտետներից մեկը (թիվ 14, երկ 131) եւ Շոստակովիչի երկու կվարտետները (թիվ 13, երկ 138 եւ թիվ 14, երկ 142), որոնք նույնպես վերաբերում են կոմպոզիտորի ստեղծագործության ուշ շրջանին: Աշխարհին հրաժեշտ տվող հանճարները հրաժեշտ են տալիս ավարտվող դարաշրջանին:

Բրոդինցիների կատարյալ արվեստը հիպնոսացնող ազդեցություն թողեց: Այդ արվեստը կարելի է անվանել տաճարային, քանի որ խտացնում է բացառապես հոգեւոր էներգիան եւ հոգեւոր մաքրագործումը: Ուստի այն մարտահրավեր է ներկայումս ակադեմիական երաժշտության մեջ տարածված կեղծ պաթոսին եւ գեղարվեստական ցածր ճաշակին:

Բեթհովենի յոթմասանի կվարտետում դանդաղ մասերի գերակշռությունը եւ զարգացման ոչ ավանդական տրամաբանությունն ասես համահունչ լինեին ռուսասանյան կոլեկտիվի կատարողական սկզբունքներին: Սովորական երաժիշտների ներդաշնակությունը թույլ էր տալիս ստեղծել զուտ ու միագույն ներկայնակ, որը զուլալվում էր մեղմ անցումների շնորհիվ:

Բրոդինցիների հատկանշական ծեռագիրն անմիջապես ի հայտ բերած սկզբնամասային Ֆուգայի եւ մանավանդ բարձրակետային չորրորդ մասի՝ Andante-ի տպավորությունն անմոռանալի է: Կատարման պրոֆեսիոնալ կատարելության պատճառով երկարատեւ ռոմանտիկ խորհրդածությունն ունկնդիրներին չծանձրացրեց իր ստատիկայով: Վարպետների ծեռքերին իտալական սմանչելի գործիքները գերում էին երաժշտական բացատրության ազնվությամբ ու բնականությամբ:

Դմիտրի Շոստակովիչի ստեղծագործությունները կազմում են Բրոդինի անվան խառյակի նվագացանկի կարեւոր մասը (13 տարի առաջ երեւանյան համերգի ժամանակ կատարվեցին խառյակի համար նրա գրած Պիեսները): 20-րդ դարի դասականի կերպարների փիլիսոփայական բնույթն ու բազմակողմանիությունն անչափ լավ են արտացոլում Բրոդինի անվան խառյակի կատարողական ոճը: Բացի դրանից, խառյակի առաջատար Ահարոնյանին հոգեհարազատ է արդի մտածողության իռացիոնալիզմը:

Ի հակակշիռ Բեթհովենի երկի, Շոստակովիչի կվարտետները կատարվեցին երաժշտական դինամիկայի որոշ թուլացածությամբ, որն ընդգծեց ծեւի իմպրովիզացումը: Դա վերաբերում էր առավելապես 14-րդ կվարտետի 1-ին մասին եւ մեկմասանի 13-րդ կվարտետին: Հաճախակի էին մենանվագները (այսպես, 14-րդ կվարտետի 1-ին եւ 3-րդ մասերում ունկնդիրներն ընթրխնեցին Նայդինի ալտի թավշյա տեմբրը) եւ առաջին ջութակի ու թավջութակի փոքրիկ զուգանվագները (նույն ստեղծագործության 2-րդ եւ 3-րդ մասերը), որտեղ բարձրագույն հմտություն ցուցադրեցին Ահարոնյանը եւ կվարտետային արվեստի վարպետ Վալենտին Բեռլինսկին:

Տպավորիչ մանրամասնություններից էր նաեւ կվարտետների վերջնամասերի հղկված, գրեթե իմպրեսիոնիստական գունավորումը, որը ծնունդ է առնում չորս արվեստագետների մտերմիկ զրույցի շնորհիվ:

Բրոդինի անվան խառյակի ոգու ասպետականությունից գերված հանդիսականները ծափահարում էին հոտնկայս:

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

Ռուբեն Ահարոնյանը եւ Բրոդինի անվան խառյակը

13-ամյա ընդմիջումից հետո Երեւանի Մեծ համերգասրահում համերգ տվեց աշխարհի լավագույն խառյակներից մեկը՝ Բրոդինի անվան լարային խառյակը, որը վերջերս է նշել իր 55-ամյակը: Ինչպես եւ 1987 թ., դրա կազմում են հիմնադրման օրվանից այնտեղ նվագող եւ խմբի գեղարվեստական ղեկավարությունը սանձառող թավջութակահար Վալենտին Բեռլինսկին, ինչպես նաեւ ջութակահար Անդրեյ Աբրամենկովը: 1996 թվականից խառյակի կազմում են Ռուբեն Ահարոնյանը (1-ին ջութակ) եւ Իգոր Նայդինը (ալտ): Հյուրախաղերը կազմակերպել էին «Կադանս» երաժշտական կենտրոնը. N.A.B. Artists Management-ը եւ Երեւանի կոնսերվատորիան: Գլխավոր հովանավորն է «21-րդ դար» միջազգային ընկերակցությունը:

ԾՈՒՅՑԱՇԱՆԴԵՍ

Պահպանողական արվեստ չի լինում

Ոչ պահպանողական արվեստի ցուցահանդես

Ապրիլի 4-ին Նոր փորձարարական արվեստի կենտրոնում (ՆՓԱԿ) «Հայ արվեստագետները կիբեռնարածական հարաբերությունների մասին» ցուցահանդեսի բացումն էր: Համադրողը՝ Նարեկ Ավետիսյանը, գրել էր վիրտուալ մանիֆեստ, որում հայ արվեստագետներին կոչ էր արել նորովի նայել արդի արվեստին: Ըստ նրա՝ արվեստագետների համար այսօր կիբեռնարածությունը ստղառման, ինքնարտահայտման լավագույն դաշտն է:

Արվեստագետներն իրենց ստեղծագործական լեզվով փորձել էին զրուցել այս թեմայի շուրջ եւ մի նոր խոսք ասել արվեստին նոր շունչ հաղորդել:

Ցուցահանդեսին ներկայացված էին 40 արվեստագետների տարբեր բնույթի աշխատանքներ՝ լուսանկար, բնանկար, կոմպոզիցիա: Որոշ գործեր էլ թատերականացված էին: Տարբեր սրահներում միաժամանակ տարբեր գործողություններ էին տեղի ունենում ու ինչպես նշեց Նարեկ Ավետիսյանը. «Ցուցահանդեսը կարծես լինի ու չլինի: Այստեղ կարեւորը կենդանի զգացողությունն է»:

Ցուցահանդեսի բնույթին բնորոշ էր աշխատանքներից մեկի հեղինակ Արփինե Թոմաջյանի կարծիքը վիրտուալ իրականության մասին: Նա ասում էր, որ դա մի հրաղուրիչ ծուղակ է, որը գայթակղում է յուրաքանչյուրին, սակայն հասնում են մի ասիճանի, երբ վերադառնում ես իրականությանը ու զգում, որ իրականությունն ավելի գնահատելի է:

Այցելուների տպավորությունները ցուցահանդեսից տարբեր էին: Նկարիչ Վահրամ Հարությունյանը մասնավորապես ասաց.

– Ընդհանուր առմամբ միջավայրը հետաքրքիր է, բայց առանձին գործերը լավը չեն, դրանք ինձ չեն հուզում: Չնայած հեղինակները հիմնականում երիտասարդներ են ու, որպես երիտասարդ, նման փորձի իրավունք ունեն:

Պրոդյուսեր Տիգրան Մխոյանի ուշադրությունն առաջին հերթին գրավել էին աղջիկները, նրանք հրաշալի էին, մնացած ամեն ինչ նա աղջիկների ֆոնի վրա էր տեսնում:

Սոցիոլոգ Մոնիկա Ագուռովան էլ նշեց, որ 2–3 տարվա ընթացքում առաջին անգամ հաճույք ստացավ ՆՓԱԿ-ի ցուցահանդեսից:

– Չկա արվեստ, եթե այն պահպանողական է„ ասաց Նարեկ Ավետիսյանը: Նորը փնտրելով ու գտնվելով է արվեստը զարգանում:

ԹԱՄԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔ

Չի՞նչ ցուցանե առակս

Հենրիկ Ավետիսյանի առակների գիրքը

Որեւէ գրքի մասին խոսել, գրել, նշանակում է նախ երկու խոսք ասել հեղինակի մասին: Քանզի գիրքը նրա էության մասնիկն է, նրա հոգու արտահայտությունը, նրա, այսպես ասած, հոգեւոր... զավակը:

Հենրիկ Ավետիսյանի պապերը ներգաղթել են հայոց պատմական Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Բզնունիք գավառի Խլաթ քաղաքից: Խլաթցիք նաեւ հնուց այգեգործներ են եղել: Եվ երեւի այդ էր պատճառը, որ Հենրիկի պապը՝ Գեղամը, մրգի հրաշալի այգի ուներ: Այգի, որ Բուժական գյուղում այն ժամանակ համարյա թե ոչ ոք չուներ:

Եվ Գեղամ պապը հաճախ է կարոտով հիշել իրենց հրաշալի այգին:

1962 թ.-ից մինչեւ հիմա աշխատում է Երեւանի ՋԷԿ-ում: Թե աշխատանքային ընկերները, եւ թե նրան ճանաչողները լավ գիտեն, որ Հենրիկը զրուցելիս առանց գեղարվեստական խոսքի «յուա» չի գնա:

Ճիշտ է, նա ավելի շատ խոհափիլիսոփայական բանաստեղծություններ ունի, բայց էլ ինչ բանաստեղծ, որ առակներ չգրի: Եվ նրա առակների գիրքը յուրատեսակ բանաստեղծական մուտք դարձավ շնորհալի բանաստեղծի համար:

Եվ թող նրա գրական մուտքը լինի բարով ու խոստումնալից: Ինչ անենք, որ նրա առաջին գիրքն այսքան ուշ լույս աշխարհ եկավ: Եվ թող Հենրիկ Ավետիսյանի խոհափիլիսոփայական բանաստեղծությունների գիրքն ավելին բերի հեղինակին, քան ընթերցողների լայն շրջանն է:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԼԱՌ

ՄԵՆՔ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԵՐՈՒՄ

Եկա մեկ դափնեկիր

Օրերս ավարտվեց Իտալիայում անցկացվող երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթը, որին մասնակցեց նաեւ Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի 3-րդ կուրսի ուսանող, դաշնակահար Հայկ Մելիքյանը: Ճանաչված մանկավարժ, պրոֆեսոր Ալեքսանդր Գուրգենովի սանը Միգիլիայի Ռագուսա քաղաքում, Վալենտինո Բուչիի անվան մրցույթում արժանացավ դափնեկրի կոչման՝ շահելով 2-րդ մրցանակը:

Բարդ եւ պարտավորեցնող էր պատանի երաժշտի՝ միջազգային խստապահանջ ժյուրիին ներկայացրած ծրագիրը, որում տեղ էին գտել բացառապես 20-րդ դարի կոմպոզիտորների ստեղծագործություններ: Հայկ Մելիքյանի՝ Բուչիի, Ռախմանինովի, Սկրյաբինի, Ստրավինսկու, Պրոկոֆեւի, Բաբաջանյանի երկերի կատարումները աստանձնացել են ոճի ճշգրիտ ըմբռնմամբ, վառ պատկերայնությամբ եւ արտիստականությամբ:

Երկրորդ կարգի մրցանակից զատ հայ երաժիշտը հյուրախաղերի հրավեր է ստացել, որոնք նախատեսված են ս. թ. դեկտեմբերին, Հռոմում:

Հայկ Մելիքյանի հաջողությունը հիշյալ միջազգային մրցույթում բնավ պատահական չէ. պրոֆեսոր Ալեքսանդր Գուրգենովի եւ նրա ասիստենտ Գեորգի Ավանեսովի բարձր մասնագիտական եւ մանկավարժական շնորհի արդյունքը լինելուց բացի, այն վկայական է երիտասարդ դաշնակահարի ակնառու կատարողական աճի: Նա տակավին աչքի է ընկել Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի 9-10-րդ դասարաններից, երբ Ա. Գուրգենովի հմուտ ղեկավարությամբ արդեն իսկ հաղթահարում էր ստեղծագործական ոչ դյուրին խնդիրներ: Սերը երաժշտության, բեմի հանդեպ եւ աշխատասիրությունը խթան հանդիսացան Հայկ Մելիքյանի համար կոնսերվատորիայի 1-ին կուրսում դառնալ Ա. Խաչատրյանի անվան մրցույթի դափնեկիր, իսկ 2-րդ կուրսում՝ դարձյալ Իտալիայում կայացած մեկ այլ միջազգային մրցույթի դափնեկիր, այդ ժամանակ արժանանալով 6-րդ տեղի:

«Հայկը խոստումնալից ուսանող է, չի սիրում գոհանալ արդեն իսկ նվաճած հաջողություններով, կարծում եմ, որ ի դեմս նրա կարող ենք ապագայում ունենալ հետաքրքիր դաշնակահար-կատարող», ասում է պրոֆեսոր Ալեքսանդր Գուրգենովը:

Հ. Ե.

ՕՐՎԱ ՊՏՈՒՂ

Ապրիլի 6

- 1483 թ. ծնվել է իտալացի գեղանկարիչ Ռաֆայել Սանտին: Նա իր արվեստում համադրում էր նախորդների նվաճումները: Մեծ մարդասեր Ռաֆայելը կտավներում ստեղծել է կատարյալ մարդու կերպարը, մարդու ու նրա շրջապատի բացարձակ ներդաշնակության իդեալը: Տարածված լուրերի համաձայն հանճարեղ նկարիչը սպանվել է իր սիրուհու տան շեմին՝ 37 տարեկանում:
- 1528 թ. մահացել է գերմանացի գեղանկարիչ Ալբրեխտ Դյուրերը: Ի տարբերություն Վերածննդի մյուս հսկաների, Դյուրերը աչքի էր ընկնում հետաքրքրությունների մեծ շրջանակով եւ բազմակողմանի գիտելիքներով: Նա նաեւ գրական հարուստ ժառանգություն է թողել: Դյուրերի արվեստն իրավամբ համարվում է գերմանական Վերածննդի գագաթը:
- 1904 թ. ծնվել է ռուս դերասան Վասիլի Մերկուրեւը, որին հաջողվում էր ե՛ւ կատակերգական ե՛ւ սուր բնութագրական դերերը:
- 1908 թ. ծնվել է երգահան Վանո Մուրադելին (ազգությամբ հայ): Մուրադելին ստեղծագործել է շատ ժանրերով, սակայն նրան հանրաճանաչ դարձրին առաջին հերթին երգերը՝ «Բուխենվալդյան ահազանգը», «Հիմն երիտասարդությանը», «Խաղաղության քայլերգը» եւ այլն:
- 1909 թ. ամերիկացի նշանավոր բեւեռախույզ Ռոբերտ Փիրին շնաձահնակով պատմության մեջ առաջինը ոտք դրեց Հյուսիսային բեւեռ:
- 1933 թ. ծնվել է ռուս դերասան Ստանիսլավ Լյուբշինը: Նրան իսկական փառք բերեց գլխավոր հերոսի դերակատարումը «Վահան եւ սուր» ֆիլմում:
- 1971 թ. մահացել է երգահան եւ խմբավար Իգոր Ստրավինսկին: 1910 թ.-ից Ստրավինսկին հեռացավ Պետերբուրգից եւ փաստորեն մինչեւ կյանքի ավարտն ապրում էր արտասահմանում՝ սկզբում Շվեյցարիայում, իսկ այնուհետեւ Ֆրանսիայում եւ ԱՄՆ-ում:
- 1869 թ. ծնվել է հայ գրող, մանկավարժ եւ հասարակական գործիչ Լեւոն Շանթը:
- Այս օրը հին հայկական տոմարով Արեգ ամսվա Մագղեղ օրն է:

ՆԱՐԻԿ ԹԱՎԵԼՈՍՅԱՆ

ԱԶԳ

Մարզական

ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ

Այո՛, սեղանի թենիսը օլիմպիական մարզաձեւ է

Կամ ինչո՞ւ կարելի է արհամարհել աշխարհի ու Եվրոպայի չեմպիոններ տված մարզաշեւը

Հետաքրքրական է, որ Համահայկական առաջին խաղերին լավագույնս կազմակերպված ու ամենաժողովրդական մարզաձեւերից սեղանի թենիսն այսօր Հայաստանում կործանման եզրին է: Սփյուռքի ու հայրենիքի հիանալի վարպետների այդ անմոռանալի տոնահանդեսը «Դինամո» մարզադահլիճում նորանոր հույսեր էր ներշնչել շատերին, որովհետեւ սեղանի թենիսն այն մարզաձեւն է, որ մեծ փառք է բերել հայկական մարզական պատմությանը, լինի Հայաստանի, թե սփյուռքի քաղաքներում ու ոստաններում: Աշխարհահռչակ այնպիսի մարզիկ-մարզուհիներ, ինչպիսիք էին Հարություն Հակոբյանը, Գեղամ Վարդանյանը, Էլմիրա ու Նարինե Անտոնյան քույրերը, Անիտա Զախարյանը, Բագրատ Բուռնազյանը (Հայաստան), Ալբերտո Քուրդոլյանը (Բրազիլիա), Բյուզանդ Գասաբյանը (Բուլղարիա), Ալեխս Ակոբոֆը (Ֆրանսիա), Սարգիս Սարխոյանը (Վրաստան) եւ ուրիշներ ընդգրկվել են սեղանի թենիսի պատվո ասյանի մեջ:

Այսօր, հակառակ Հայաստանի օլիմպիական կոմիտեի որոշ ղեկավարների անգիտության, սեղանի թենիսն օլիմպիական մարզաձեւ է, ընդգրկված է Սիդնեյի օլիմպիական խաղերում: Վիճարկվում են 6-ական ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներ: Զարմանալի է, որ վերջերս տեղական հեռուստատեսության ալիքներից մեկով ելույթ ունեցող սեղանի թենիսի Եվրոպայի մեր նախկին չեմպիոններից մեկը, որն այսօր բարձր պաշտոնում է Հայաստանի մարզական կյանքում, չբարեհաճեց գոնե մի բառով հիշել, թե սեղանի թենիսին էլ կարող են պահեստային տեղ տալ Սիդնեյի օլիմպիադայի համար...

Դեռ ավելին ու անհավատալին. մինչ մշակույթի, երիտասարդության հարցերի ու սպորտի նախարար Ռոլանդ Շառոյանն ամեն կերպ փորձում է օժանդակել Հայաստանի սեղանի թենիսի ֆեդերացիայի պաշտոնական դիմումներին, ապա եւ նախարարի ազնիվ քայլերը գործնականորեն անպտուղ են մնում, քանի որ այսօր ոչ ոք չի ցանկանում ֆինանսավորել սեղանի թենիսը, որովհետեւ այդ մարզաձեւը մոդային «սուպեր սպար»-ներ չի ծնում եւ չի էլ ծնելու իր ավելի քան 300 միլիոն հետեւորդների մեջ, ամբողջ աշխարհում: Մինչ Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը շուտով Հայաստանի սեղանի թենիսիստներին կուղարկի լավագույն մարզագույք պատրաստվելու համար Գերմանիայում եւ Սլովակիայում տեղի ունենալիք Եվրոպայի մեծահասակների եւ պատանիների առաջնություններին, սեղանի թենիսի ֆեդերացիան դրամական ոչ մի միջոց չունի կազմակերպելու օրեցօր ծգծգվող հանրապետական առաջնությունը, իսկ ազգային հավաքականը չունի ոչ մի մարզադահլիճ ու սեփական բարձակարգ սեղաններ՝ մարզավիճակի մեջ լինելու համար: Հայաստանը չմասնակցեց Մալայզիայում կայացած աշխարհի թիմային առաջնությանը, եւ պատվիրակությունը Բրեմեն, Եվրոպայի առաջնություն երեւի կմեկնի սեփական միջոցներով:

ՀԱՄՊ ՄՈՍԿՈՖՅԱՆ

ԲՈՔՍԱՄԱՐՏ

Հայաստանից՝ հինգ մասնակից

Այսօր Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում սկսվում է ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի հերթական առաջնությունը: Իսկ աշխարհամասի չեմպիոնների անունները հայտնի կդառնան ապրիլի 9-ին:

Հայաստանի հավաքականը հանդես կգա հինգ ըմբիշներով: Մեր հանրապետությունն այս մրցումներում կներկայացնեն Ասլանայի օլիմպիական խաղերի փոխչեմպիոն Արմեն Մկրտչյանը (57 կգ քաշային կարգ), Արշակ Հայրապետյանը (63 կգ), Արթուր Ղազարյանը (69 կգ), Հաբեթնակ Կուրղինյանը (76 կգ) եւ Մամեդ Աղաեւը (85 կգ):

Նշենք, որ Եվրոպայի առաջնությունը նաեւ ընտրական բնույթ ունի. հաղթողներն իրավունք են ստանում մասնակցելու օլիմպիական խաղերին: Հիշեցնենք, որ Սիդնեյում հանդես գալու իրավունք մեր ազատոճայիններից առայժմ նվաճել են երկուսը՝ աշխարհի եռակի չեմպիոն Արա Գեւորգյանը (69 կգ), եւ Մարտին Բերբերյանը (58 կգ):

Այնպես որ, բուդապեշտյան առաջնությունում Հայաստանի ըմբիշները կարող են ավելացնել իրենց օլիմպիական ուղեգրերի թիվը:

ՖՈՒՏԲՈԼԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիճակահանությունն անցկացվեց

Երեկ ՀՖ Ֆուտբոլի Ֆեդերացիայում տեղի ունեցավ «Անկախության» գավաթի խաղարկության հաջորդ եզրափակիչ փուլի վիճակահանությունը: Այդ փուլում կհանդիպեն Շիրակ (Գյումրի)–Կիլիկիա (Երեւան), «Շվարթնոց» (Երեւան)–«Դինամո» (Երեւան), «Լեռնագործ» (Կապան)–«Արարատ» (Երեւան) եւ «Միկա» (Աշտարակ)–«Արաքս» (Արարատ) զույգերը: Խաղերը տեղի կունենան նախ զույգերում առաջինը նշված թիմերի դաշտերում, ապա հյուրընկալողների եւ հյուրընկալվողների դերերը կփոխվեն: Առաջին երեք զույգերը կմրցեն ապրիլի 9-ին եւ 18-ին, վերջին զույգի խաղերը կանցկացվեն ապրիլի 18-ին եւ 22-ին:

Ընկերական հանդիպում Քութայիսում

«Միկա»-«Արաքս» հանդիպումը հետաքրքրելու պատճառն այն է, որ «Արաքսը» մեկնում է Քութայիս, որտեղ Վրաստանի առաջնությունը գլխավորող «Տորպեդոյի» հրավերով նրա հետ ընկերական խաղ կանցկացնի ապրիլի 7-ին: Տեղի կունենա նորակառույց մարզադաշտի բացման արարողությունը, որից հետո խաղադաշտ կմտնեն «Տորպեդոն» ու «Արաքսը»: Նախատեսվում է, որ մարզադաշտում պատվավոր հյուրերի թվում կլինի նաեւ Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն:

Կմրցեն երիտասարդական հավաքականները

Հայտնի դարձավ Եվրոպայի երիտասարդական (մինչեւ 21 տարեկան ֆուտբոլիստների) առաջնության եզրափակիչ փուլի վերջին մասնակիցը: Դա Անգլիայի հավաքականն է, որը վճռական խաղում 3–0 հաշվով հաղթեց Հարավսլավիայի ընտրանուն: Այսպիսով, եզրափակիչ փուլում, որը կանցկացվի Սլովակիայում մայիսի 27-ից հունիսի 3-ը, աշխարհամասի չեմպիոնի կոչումը կվիճարկեն հետեւյալ թիմերը. առաջին խումբ՝ Իսպանիա, Չեխիա, Խորվաթիա, Հոլանդիա, երկրորդ խումբ՝ Իտալիա, Սլովակիա, Թուրքիա, Անգլիա:

Երկուսում էլ՝ մարտական ոչ-ոքիներ

Անցկացվեցին Չեմպիոնների լիգայի խաղարկության հաջորդ եզրափակիչ փուլի առաջին երկու հանդիպումները (մյուս երկուսը կայացան երեկ ուշ երեկոյան):

Մադրիդի «Սանտյագո Բեռնաբեու» մարզադաշտում հանդիպեցին Չեմպիոնների լիգայի վերջին երկու տարիների հաղթողներ **«Ռեալն» ու «Մանչեսթր յունայթեդը»**: Ասենք, որ բրիտանացի ֆուտբոլասերների բուռն վարքագիծը հաշվի առնելով՝ իսպանական ոստիկանությունը նախազգուշական մեծ աշխատանք էր տարել: Ինչ վերաբերում է բուն խաղին, ապա այն անցավ հետաքրքիր պայքարում, որտեղ հաջողության հասնելու ավելի մեծ հնարավորություններ ունեին «Ռեալի» ֆուտբոլիստները: Մի քանի անգամ «Մանչեսթրին» փրկեց դարպասապահը՝ ավստրալացի լեգեոնական Մարկ Բոսնիչը: Անգլիացիների գլխավոր մարզիչ Ալեխս Ֆերգյուսոնը դժգոհ մնաց իր մյուս սաներից, ինչը եւ արտահայտեց խաղից հետո:

Մյուս՝ «Պորտո»–«Բավարիա» հանդիպումը եւս ոչ-ոքի ավարտվեց, բայց այստեղ գոլեր գրանցվեցին: Խաղից առաջ շատերին ավելի գերադասելի էին թվում Գերմանիայի չեմպիոնի հնարավորությունները, բայց պորտուգալացիներն իրենց խաղով ցույց տվեցին, որ լուրջ մրցակից են ցանկացած մրցակցի համար: Հանդիպումն ընթացավ դաշտի տերերի առավելությամբ, բայց «Պորտոն» հաշիվը բացեց միայն երկրորդ խաղակեսի սկզբին: Այդի ընկավ բրազիլացի Մարիո Ժարդելը, որը Չեմպիոնների լիգայի այս խաղարկությունում իր խփած գոլերի թիվը հասցրեց 9-ի՝ դառնալով ամբարկուների միանձնյա առաջատար: «Բավարիան», իհարկե, չհաշտվեց պարտության մտքին եւ ակտիվացրեց իր գործողությունները: Խաղավարից 10 րոպե առաջ մեկ այլ բրազիլացի՝ հյուրերի հարձակվող Պաուլո Սերժիոն, հաշիվը դարձրեց 1-1:

Անշուշտ, մրցակցի խաղադաշտում ոչ-ոքիները «Մանչեսթր յունայթեդին» ու «Բավարիային» լավատեսություն են ներշնչում: Պատասխան խաղերը տեղի կունենան ապրիլի 19-ին:

Պահ «Ռեալ»–«Մանչեսթր յունայթեդ» խաղից

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՇՏԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Սեզամ: 2. Մակակ: 3. Դեղձանիկ: 4. Հալվա: 5. Երդիկ: 7. Գավիթ: 8. Լազեր: 9. Բաղիա: 10. Ալժիր: 15. Արաբո: 16. Ավանդ: 17. Առէջ: 18. Ամիակ: 20. «Բուրան»: 21. Ավլոս: 24. Աոյուծագի: 25. Հոոոոդ: 26. Ասլան: 28. Ինարի: 29. Ամարա: 30. Խուրմա: 31. Իմբիր: 32. Անաբա: 33. «Ալիբի»:

Հորիզոնական

1. Սամում: 4. Հայնե: 6. Արենա: 7. Գազել: 9. Բուդդա: 11. Անծավ: 12. Միզուկ: 13. Ազդակ: 14. Թամար: 17. Ամինա: 19. Աբգար: 22. Համաստեղ: 23. Ճիաուրելի: 25. Հորդա: 27. Քուռակ: 28. Ինեսա: 30. Խալդի: 32. Ագամա: 34. Մածուն: 35. Պարոն: 36. Իգիդա: 37. Ինգուշ: 38. Աղտոր: 39. Աղնսի:



Հորիզոնական

1. Արաքսի «սեւանածին» վտակը: 4. Դալայ-լամայի նստավայրը մինչեւ 1951 թվականը: 7. Ջորին՝ բուսաբանի տեսանկյունից: 10. Փաղաղվելու «գործընթաց»: 11. Աշխարհի կրոններից: 12. Եւ անվտանգության, եւ կենտրոնական, եւ օլիմպիական: 13. Գործարար մարդու գործը: 14. Հնագետ Հ. Շլիմանի պեղած քաղաքը: 15. Զինվորական կոչում: 17. Խրախճանքի աթիթ: 19. Վերի «հիշատակը»: 22. «Ցածր» ձայնով փողային նվագարան: 25. Սկսնակ երաժշտի «այբը»: 27. Կնյազի եւ Ռոզի «կնքահայրը»: 28. Հարսի «դասակարգային թշնամին»: 29. Հանդիսավոր խոսք + նվիրական վկայակոչում: 30. Կենդանակերպի 12 նշանների ամբողջությունը: 31. «Հուշ տվող, «Դինամոյին» կուլ տվող»: 32. Երգող ու «երգված» բլբուլ: 33. Այդ կինը Ադամին խաբեց:

Ուղղահայաց

2. Բույս, որի սերմերից բուրավետ եթերայուղ են ստանում: 3. Խճճված հանգույցն «արտոնագրած» փայտգիացին: 5. Երկրի ու երկնի «կարը»: 6. Օ. Բենդերի «փողի տղամը»: 8. Կանանց «էքսեցիկական» դաս: 9. Ընտանեկան «նկարադարան»: 10. Եւ Շահազիզ, եւ Լդուսյան: 16. Հռոմեական «կաթողիկոս»: 18. Չոգտագործվող «խուրձ»: 19. Մեխանիկայի «ծույլ ու ոչ շարժունակ» մասը: 20. Կոորդինատներից՝ օրդինատը: 21. Եւ Ossn, եւ Պյոտր, եւ Յոհաննես, եւ Վիլհելմ: 22. Հինայի «զուգակիցը»: 23. Բալասան: 24. Ճաղոնական «բազմաբնույթ» խալաթ: 26. Երկրաշարժից «ծնվող» «ճաղոնական» ջրալիմ:

ԱԶԳ

Օրվա հեռանկար

«Մարդու իրավունքների խախտումն այլեւս ներքին գործեսական գործ չէ»

ԵՐԵՎԱՆ, 5 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Մարդու իրավունքների հարցերով ԱԱԿ-ի բարձրագույն հանձնակատար Մերի Ռոբինսոնը ռուսական իշխանություններին կոչ է արել ստեղծել Չեչնիայում իրավախախտումները հետաքննող անկախ հանձնախումբ: Ռուսաստան կատարած իր հնգօրյա այցից հետո նա նշել է, որ այլեւս նվազագույն կասկած անգամ չունի, որ Չեչնիայում կոպտորեն խախտվել են մարդու իրավունքները, եւ այժմ հասել է հաստատման ժամը: Նա ասել է, թե ՌԴ ԱԳ նախարար Իգոր Իվանովն իրեն խոստացել է լրջորեն մտածել այդ անկախ հանձնախմբի ստեղծման մասին: BBC-ի հաղորդման համաձայն, ԱԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանն ասել է, թե մարդու իրավունքների խախտումն այլեւս ներքին պետական գործ չէ: Հանդես գալով Ժնեւում կայացած մարդու իրավունքների հիմնախնդիրներին նվիրված կոնֆերանսում Անանը շեշտել է, որ այդ իրավունքների խախտման դեպքում համաշխարհային հանրությունը պարտավոր է օրենքով օգնել զոհերին: Նա նաեւ ասել է, որ թեեւ ավելի մեծ թվով երկրներ են ձգտում համապատասխանեցնել իրենց օրենքները միջազգային նորմերին, սակայն նրանց պարտավորությունների ու դրանց գործադրման միջեւ եղած խզումը նախկինի պես շատ մեծ է:

Թուրքիայում ատոմակայանի շինարարության նախագիծը հարցականի տակ է

ՍՏԱՄԲՈՒԼ, 5 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Թուրքիայի Պետական գանձատան քարտուղարությունը հայտարարել է, որ չի կարող երաշխավորել 5 մլրդ. դոլար արժողությամբ Աք-ֆույու ավազում կառուցվելիք ատոմակայանի շինարարության ֆինանսավորումը: Մասնավորապես իրական չի համարվում ընթացիկ տարում այդ նպատակով նյութական միջոցների տրամադրումը, իսկ 2001 թ.-ի հնարավոր ֆինանսավորման մասին դեռեւս որոշակի ոչինչ ասել չի կարող: Սա աշխուժացրել է շինարարության հնարավոր ձախողման մասին խոսակցությունները: «Թյուրքիե» թերթը գրում է, որ թեեւ մոտ օրերս նախատեսվում է վերջնական որոշում ընդունել ատոմակայանի կառուցման առիթով հայտարարված հայտմրցույթի վերաբերյալ, սակայն վերջնական հայտարարությունից հետեւում է, որ այս ուղղությամբ լուրջ աշխատանքներ կսկսվեն լավագույն դեպքում 2002 թվականից: Նշենք, որ ԱԷԿ-ի կառուցման նախագիծը հակազդեցության բուռն ալիք է առաջացրել Թուրքիայի հասարակական շրջանակներում, ինչի առնչությամբ ցույցեր են տեղի ունեցել մասնավորապես Ստամբուլ եւ Իզմիր քաղաքներում:

ՀԱՅ 1965 թ. գործող Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամավորական ծառայության կոմիտեի անդամ է, հրավիրում է մասնակցելու Եվրոպայի երկրներում, ԱՄՆ-ում, Հայաստանում միջազգային աշխատանքի ճամբարների ամառային ծրագրերին որպես կամավորական:

Դիմումներն ընդունվում են հետեւյալ հասցեով՝ Կորյունի 19ա, 7-րդ հարկ

Հեռ.՝ 52 27 01, 52 27 72, 52 27 88

ՀԵՌՈՒՏԱՑՐԱԳՐԵՐ

5 ապրիլ

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.10 Մանրամասներ
10.20 Մամուլի կրոյակ
10.30 Սնունդության կանխավարկած
11.00 Գ/Ֆ «Վերջին ուրախ օրերը»
12.25 «02»
13.00 Հայլուր
13.20 Ուրիկոն+
17.00 Հայլուր
17.20 «Արեւիկ»
17.45 Մուլտֆիլմ «Եկվորը կաղամբի մեջ»
18.00 Սերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 «Խոշոր շահում»
19.55 Հասմիկ Պապյան
20.25 Արակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակասայոգ
21.50 Պրեմիերա
22.00 «Բարի ակնթարթ»
22.50 Հեռուստամարաթոնի էջերից
23.10 Հիթ-շերթ
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեղքնթաց
01.00 Ուրիկոն+

Պրոմեթեւս
9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.00 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
17.00 Մուլտծրագիր
17.35 Բնաշխարհ. «Բնությանը պահպան»
18.00, 20.00 Լուրեր
18.15 Սանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Սոլին»
19.05 «Ամեն ինչ հանուն քո սիրո»
20.35 Տեսաֆիլմ «Հանո Սահյան»
21.05 Երգում է Բարսեղ Թունանյանը
21.30 Գ/Ֆ «Վալտոն»
23.50 Երաժշտություն կեսգիշերից առաջ

9.00 Տոմար
10.30 Կամ-կամ (կրկնություն)
19.05 Շղթին
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Ի դեմ
20.30 Ասպարեզ
21.10 Հարարակ
22.05 Գ/Ֆ «Հավերժ երիտասարդ»
0.35 Ակնթարթ
0.40 Գ/Ֆ «Փախստական» (ավարտին Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ջոնի Քվեսթի անհավանական արկածները»
16.45 Վիկտորինա երեխաների համար
17.00 «100 տոկոս» ծրագիրը
17.25 ...Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.30 Սելանտա-Սիդնեյ. ռեպորտաժը շարունակվում է...
20.00 Գործուղում պատերազմ
20.45 Սերիալ «Հուշեր Շերլոք Հոլմսի մասին»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Լեոնիդ Ֆիլատովի հեղինակային ծրագիրը. Վլադիմիր Իվաշով
23.50 Լավագույն «երգերը գլխավորի մասին III»
00.50 Նորություններ
01.10 Ս. Դովժենկոն «Սուրհանդակները» ծրագրում
01.45 Գ/Ֆ «Ոսկե հատակ» (դերերում Ռ. Բիկով, Ս. Մախովիկով, Վ. Յակուշեւ, Ռուսաստան Լենհատան, 1995 թ.)

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20-10.20 Բարի լույս, Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
9.20 Հեռուստատեսային ՀՄՄ. հերթական բաժանումներ
10.30 Քվանտային բժշկագիտություն
10.40 «Արենա-սպորտ»
11.00 Հոմեոպատիա եւ առողջություն
11.15 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Հեռուստատեսային ՀՄՄ. հերթական բաժանումներ
13.25 Իմ XX դարը
14.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
14.30 «Կանանց հարց»
15.05 Սերիալ «Սեւ ծաղիկներ»
15.50 Սերիալ «Վայրի հրեշակը»
16.40 Նոր «Հին բնակարան»
17.35 Խանութ բազմոցի վրա
18.30 Աշխարհ
19.05 «Ռոսիա» կինոթատրոն. Ալեքսեյ Ժարկովը, Լարիսա Ուդովիչենկոն «Ոսկե հորթերի վալսը» ֆիլմում
20.25 «Սոֆիտակ թուրակ» ակումբ
21.45 Կինոյի ժամ. Գենադի Կորոլկովը «Արացություն» ֆիլմում
23.35 Ալեքսանդր Բույնով. «Տղաներ՝ բեմում եւ կյանքում»
01.40 Հեռուստատեսային ՀՄՄ. հերթական բաժանումներ
01.55 Խանութ բազմոցի վրա

Հայաստանի ամերիկյան համալսարան

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է 2000-2001 ուսումնական տարվա ընդունելությունը՝ **մագիստրոսի կոչում** շնորհող հետեւյալ ծրագրերով.

- **ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**
- **ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**
- **ԳՈՐԾԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ**
- **ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**
- **ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ**

Բարձրագույն կրթությունը եւ անգլերենի լավ իմացությունը պարտադիր են:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է **ապրիլի 17-ը, ժամը 15⁰⁰-ը:**

Տեղեկությունների համար դիմել՝

Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 19 սենյակ:

Հեռ.՝ 27-16-29

USAID

AED

Academy for Educational Development

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID) եւ Կրթական զարգացման ակադեմիան (AED)

տեղեկացնում են

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը կկայանա **ապրիլի 7-ին, ժամը 11:30-ին,** Թեքեյան կենտրոնում *(Խանջյան 50)*:

Հանդիպմանը կմասնակցեն

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության բյուջետային գործընթացի կառավարման գլխավոր վարչության պետ

Դավիթ Համբարձումյանը,

ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային, բյուջետային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ

Վարդան Բոսանջյանը

Թեման՝ **«ՀՀ 2000 թ. պետբյուջեի ձեւավորման յուրահատկությունները»:**

JOB OPENING

Catholic Relief Services an American non-profit working in Development and Humanitarian Aid in Armenia since 1996 is seeking a qualified

Finance Assistant* and *Logistics and Procurement Coordinator

***1. Finance Assistant*.**

Responsibilities include:
- Assisting many of day-to-day tasks of financial maintenance
- Verifying and entering financial information and coding

Qualifications:
- Higher education degree (preferably in accounting, finance or related field)
- Strong written and oral communication skills in English and Armenian
- Familiarity with basics of accounting
- Computer skills-word processing, spreadsheets and databases

2. Logistics and Procurement Coordinator
- Responsibilities include:
- Following CRS and donor procurement and procedures all equipment and vehicle purchases
- Coordinating with RA government bodies in procurement issues
- Assisting international staff with registration and housing issues

Qualifications:
- Extensive knowledge of suppliers, agents and government bodies in the RA concerned with humanitarian affairs
- Driver's license (B, C and D class preferred)
- Working knowledge of spoken and written English
- Strong organizational and priority skills
- Previous experience working with international organizations

If you are interested, please send or fax by ***Monday, April 10*** your detailed resume and the names and telephone numbers of three references to CRS Armenia, 13/14 Azgagrakan Street, Dzoragiugh, Yerevan, Armenia, Fax: 151-524, Tel: 583-403, 527-463: Email: Eric@crs.am, Eric Boyle, Director of Finance and Administration

Ինտերնետ Միությունը

(ԻՄ) հայտարարում է ընդունելություն Windows NT 4.0, UNIX - Novell 4. 1 օպերացիոն համակարգերի ցանցային ադմինիստրատորների պատրաստման դասընթացների:

Դասընթացի տեւողությունն է 75 ժամ, օրական 4-5 ժամ: Դասերը անց են կացվելու ուսանողների հետ համաձայնեցված օրերին եւ ժամերին: Դասերը ավարտելուց տրվում է համապատասխան օպերացիոն համակարգի ցանցային ադմինիստրատորի սերտիֆիկատ: Ուսանողների քանակը խմբում 10-12 հոգի: Դասընթացի արժեքը $190-ին համարժեք դրամ:

Դասերը անցկացվում են Միության կենտրոնում, Փավստոս Բուզանդ 31 հասցեով, Երեւաննախագիծ ինստիտուտի շենքի 7-րդ հարկում:

Մանրամասնությունները՝ 582760 հեռախոսահամարով:

@rminco Global Telecommunications **Համակարգչային ուսուցում՝ ԻՆՏԵՐՆԵՏ դպրոցում: *Խանջյան 50: Հեռ. 575823:***

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1237 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 5. 04. 2000 Գինը՝ 100 դրամ